



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Գաղտնիարքարանի

ՀԱՅԿ ԽՈՍՏ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Թ

17 ՕԳՈՍՏՈՍ 1884




Կ. ՊՈԼԻՍ

1884

ԳԻՒՆՆԵՑ ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԳԻՒՆ

Տիգրան	Լ.Ֆինայի	Երասուֆեան	Ս. Արեւոյէր
Քրիստոսօս	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յովհաննէս	»	Արշակունի	Ա. Արեւոյէր
Յանգր	»	Պօլնակեան	Բ. »
Ստեփան	»	Տամատեան	Գ. »



Ձեռնաստօրեան Գիւան

Մասթէոս Եսկ. Իգմրլբեան Արեւոյէր
 Գարեգին Վրդ. Թաթարեան
 Մարկոս Լ.Ֆինայի Ազարէզեանց

Յարսբերօրեան Գիւան

Յովհաննէս Լ.Ֆ Թորոսեան Արեւոյէր
 Ռուբէն » Պալկոբեան
 Վիշէն » Օրմանեան

Դատիարակօրեան Գիւան

Ռէթէոս Լ.Ֆ. Պէրպէրեան Արեւոյէր
 Գէորգ » Ապստղաճ
 Միքայէլ » Մամիկոնեան

Իրաստօրեան Գիւան

Յովհաննէս Քչյ. Մկրեան
 Յակոբ Լ.Ֆինայի Արշակ
 Գարբէլ » Կորասունիկեան

Կալուածոց Գիւան

Քրիստոս Լ.Ֆ. Ղազարոսեան Արեւոյէր
 Յակոբ » Եէմէնիճեան
 Պօղոս » Թորգոմեան

Նախամեղնօրեան Գիւան

Մինաս Լ.Ֆինայի Չեւոզ Արեւոյէր
 Յովհաննէս » Արշակունի
 Նշան » Պօյաճեան

Համարալարեան Գիւան

Կարապետ Լ.Ֆ. Սրվաճեան Արեւոյէր
 Մկրտիչ » Ճանրմեան
 Գառնիկ » Յովակիմեան

Խմբագրօրեան Գիւան

Հարաբճուժ Լ.Ֆինայի Ալաճաճեան
 Յակոբ » Գուրգէն
 Կարապետ » Խիժիճեան

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄՆ 1884 ԱՄԻ

Ն Ի Ս Տ Թ.

17 Օ Գ Ո Ս Տ Ո Ս 1884

ՆԱԽԳԱՀ. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Օէֆէրեան (Առաքելայ) :
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եռսուֆեան .

Օ Ր Ս Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
- Բ. — Խնդիր՝ Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման — Տեղեկագիր Ազգային Վարչութեան (Դռնիկ) .
- Գ. — Առաջարկութիւն Ազգային Վարչութեան Խառն Ժողովոյ ի մասին Առաջնորդական խնդրոյ .
- Դ. — Ընտրութիւն Ելմտական Յանձնախմբի .
- Ե. — Ընտրութիւն Գ. Ը Ստենագարի Ազգային Ժողովոյ .

Ատենաը ընդունեցաւ ժամը 2 1/2 ին , 'ի ներկայութեան 28 Երեսօրիսանայ , որոց վերջին թիւը 47 ի յանգեցաւ :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

4 .

Վաւերացումն է. Է. Ը. Նիստերու .
Ատենագրութեանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ . — Ժողովոյ վաւերացման կ'ենդարկեմ է. Ը Նստի Ատենագրու-

թիւնն , և կը հրատարակ Երեսօրիսան Վֆէնտիներն յայտնել իրեանց ղիտողութիւնն է կթէ տունն :

ԹԵՎԵՆԱՆ Ա. ԷՅ. — 183 Երես Բ. սիւնակ 27 տող , դարեւոր պէտք է լինի տարեւոր : — 186 Երես Բ. սիւնակ 31 տող . մեր պարտքն է՝ պէտք է լինի մեր պարտքն է : — Նոյն Երես , նոյն սիւնակ , 33 տող տամ պէտք է լինի տամ : — 187 Երես Ա. սիւնակ 36 տող միայն պէտք է լինի միոյն : — Նոյն Երես Բ. սիւնակ 17 տող յետեւ պէտք է լինի յետեւայ : — 188 Երես Ա. սիւնակ 3 տող ց երով ցանցիք պէտք է ձ երով լինի մանրիք :

Նոյն երես առաջարկութեանս Դ րո պարբերութիւն որ տարած է « 80—81 ինն 82 ին մէջ առնել և 82—83ը 84 ի մէջ 85 ինն 86 ի մէջ առնելով շարունակելով » խօսքերը բոլորովին սխալ եղած է որ պէտք է լինի « 80—81 ինն 84 ի մէջ, 82—83ինն 85 ի մէջ : 84—85 ինն 86 ի մէջ առնելով շարունակելն » :

Երես 194 . Ա . սինակի մէջ ըստուծ է թէ « թո՛ղ վերցուի այն մի կարգ ուրիշներով ուսմանըները զոր մեր ազգի դատարարակութեան գլխաւոր պատճառն է , պէտք է լինի « գլխաւոր արգելիլն է » :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ . — Ձեր խօսքեր զրար լինելով , ինչ որ ըլլայ ձեր ձեռագրէն առաջ եկած են :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Երես 139 , սինակ Ա . — Ըստած է թէ « Ղազարոսեան « էֆէնտի կը բողոքէ Թնկրեան էֆի արտա « սանայ վարժապետ բառին դէմ » որ սխալ է : Ես ըսի թէ « կը բողոքեմ վարժապետ բա « ռըն տնարգական մտօք առնուած լինելուն « դէմ » , զի ես եւս վարժապետ եմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՖ . — Երես 167 . սինակ Բ . 25 րո տողին մէջ նոյն պիտի ըլլայ նոյնին :

Երես 168 , սինակ Ա . 11 րո տողին մէջ կանոնաւոր պիտի ըլլայ կարեւոր : Սինակ Բ . 10 րո տողին մէջ 941,000 պիտի ըլլայ 941,500 : 20 րո տողին մէջ կ'աղաքեն պիտի ըլլայ կ'աղաղակեն :

Երես 172 , սինակ Ա . 10 րո տողին մէջ սա խօսքը Է . այս այսպէս եղած է Յակոբ Պատրիարքի օրէն սկսեալ , պիտի ըլլայ , մի Է . նոյն համոզումն ունեցած են նաեւ նախկին Պատրիարքուեր :

Երես 174 , սինակ Բ . առաջին տողին մէջ Պատրիարքութիւնը պիտի ըլլայ Պատրիարքին : Նոյն սինակին վարէն սկսեալ 4 րո

տողին մէջ վերադարձնելու պիտի ըլլայ կիսադարձնելու :

Երես 175 , սինակ Ա . 10 րո տողին մէջ բարգվանութեամբ պիտի ըլլայ բարգվանութիւն : վարէն սկսեալ առաջին տողին մէջ տգիտութեան պիտի ըլլայ գիտութեան :

Երես 176 , սինակ Ա . 8 րո տողին մէջ գարգացումն պիտի ըլլայ գագացումն :

Երես 179 , սինակ Բ . իմ խօսքս սա էր , (առ Սըլիմեան Կ . էֆ .) . Ուրեմն դուք ալ կը խողէք Աղբը , բանդի այդ պահանջումն ընկնուս համար խողարար կ'անուանուինք մենք : — Իրս խօսքը Ղազարոսեան էֆէնտիինն է :

Երես 180 , սինակ Ա . Ձերառ էֆէնտի խօսքն թերի է . Երբ Ձերառ էֆէնտի ըսու նաեւ թէ « տտնր 20 տարի է 'ի վեր ազգը « խողիլէ զտտ տրիշ բան ըրած չունին » . այն տտնն ես պատասխանեցի թէ . « Ձեր « հանդիսը կը խողենք , չղարբթ . ձեզ « նման արտրածներ կը մղարեցենն Պատրի « արքեներն իրենց ողղութենէն և այս Աղ « զային Ժողովը տարուկ կ'ընեն » : Եւ ապա Ասենապետ էֆէնտին երկու խողմն ալ 'ի կարգ հրակրելու ազդարարութիւն ըրա :

ՁԵՐԱՋ Մ . ԷՖ . — Ընդմիջումներէս շտտն ըրն արձանագրուած չեն , սղմակի մէջ տեղի ունեցած լինելով , ուստի կը վերահաստատեմ զտտնր :

Էլ 162 , սինակ Բ . տող 21 . պրտտտ խանեցի ընդմիջմամբ . « Ժողովայ մեծամասնութիւնը մեղ չեա է . այլ ստեպ բացակայ կը լնայ նիտարէն : »

Էլ 163 , սինակ Ա . տող 12 . պրտտտ խանեցի ընդմիջմամբ . « Փափաղեան էֆէնտի կը սխալի . Ուսմական Խորհրդայ տնդամ եղայ ոչ թէ 1 1/2 տարի , այլ 6—7 ամիս մի . այն » :

Նոյն էլ և սինակ , տող 18 . պէտք է յարել . « Կթական ծրագրն արդէն ներկայացած էր Ժողովոյս , ևս ստիպողութիւն ա .

առջարկած և կրկնած և սնդած էի աստ, և կը սպասէի Նախածնունութեան Գիւտնի տեղեկագրին :

Նոյն էջ և սխնակ, տող 35. պատասխանեցի ընդմիջմամբ. « Մեր անդամակցութեան օրով տրուած է այդ որոշումն և դործողութեան ձեւնորոշումը : »

Նոյն էջ, սխնակ Բ, տող 34. պատասխանեցի ընդմիջմամբ. « Ձեր շինած ծրագրին է որ այսօր ծաղկելու կ'ենէր : Եթէ Ժողովս քննութեան առնուր զայն, վնասակար մասերը կրնային ջնջուիլ : »

Էջ 164, սխնակ Ա, տող 9. պատասխանեցի ընդմիջմամբ. « Իրողութեանց դէմ է որ կը բողոքէք, զի 1884 էն 'ի վեր կրթական և թաղային ծրագրեր անոյ՜ծ խնդրոց կարգը տնցան : »

Նոյն էջ և սխնակ Բ, տող 20. այժմ է յարել. « Եթէ բաշխութիւն ունիր, վստայ վարձապետանոցի փակումը խնդիր ըրէք նստ, որ պատասխանելիք ասնուր : »

Նոյն էջ և սխնակ, տող 23. պատասխանեցի ընդմիջմամբ. « Ես Ուսումնական Խորհրդոյ մէջ ալ կարծիք յայտնած եմ թէ Պատրիարքարանը կարողութիւն չ'ունէր 50,000 տողու : »

Էջ 173, սխնակ Բ, տող 26. պատասխանեցի ընդմիջմամբ. « Ձայն ձեռք սունունք և ջանանք կեղծական վարժարանի վերածել : »

Յիշատակուած չ'են Փախաղեան Էֆէնտիի գրգռիչ յայտարարութիւններէն ոմանք, ինչպէս սա յայտարարութիւնը թէ ինք ապագայ Պատրիարքներն ալ պիտի քննադատէ, առ որ պատասխանեցի ընդմիջմամբ. « Արեւմն Հայոց աղբը խարդալութեան երես տեսնելիք չ'ունի ձեր ձեռքէն : »

Էջ 180, սխնակ Ա. Արձանագրուած է Փախաղեան Էֆէնտիի զիս շողորոք անուանելը, այլ ստոր 'ի պատասխան զինք խոռվարար անուանելս արձանագրուած չ'է : Յի-

շատակուած չ'է նաև սա ընդմիջումն. « Ժողովորդը ձանձրայա՛ւ ձեր հանած խտուրթիւններէն : Մինչև ե՞րբ աղբը սխտի սրտակա՛տէք ներքին կոխներով : »

Ուրիշ զիտողութիւն չ'իյնելով, Ատենայտեան Էֆէնտի Ժողովոյ ընդունելութեան կ'ենթարկէ էր նախ ատենագրութիւնն որ կը վ.Ա.Ի.Բ.Ա.Յ.Ն. հանդերձ եղած զիտողութեամբք :

ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Ժողովոյ ընդունելութեան կ'ենթարկեմ Ըրտ նախ Ատենագրութիւնն ևս :

ՁԵՐԱՋ Մ. ԷՖ. — Ըստ մեր ներքին կանոնագրի, նախ մը Ատենագրութիւնն հարկ է որ յաջորդ նիստէն զէթ քսան և չորս ժամ առաջ հասնի երեսօտիանաց ձեռքն : Արդ օրովհետև ութերորդ նախ ատենագրութիւնն այս առատ միայն կրցայ ընդունիլ, Ժողովոյ բացումէն երեք քառորդ առաջ, և ժամանակ չ'ունեցայ կարդալ զայն, ուստի կ'առաջարկեմ յայժմորդ նախի թողուլ անոր փութեացումը :

Արդարև շնորհակալ եմք Մայր-Գիւտնէն որ իւր պարտականութիւնն անթերի կերպիւ կը կատարէ, կանոնաւորապէս հասցնելով Ատենագրութիւններն ժամանակին, և հարկ է գիտնալ որ տեղի ունեցած այս յապաղման պատճառն անոնք են՝ որոց յանձնուած է բաշխել Ատենագրութիւններն :

ՓԱՔԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մենք կրէկ ասուտ ստացանք :

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Մենք ալ նոյնպէս :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊՍ. — Ես բնա՛ւ ըստացած չ'եմ՝ ատենագրութիւն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Արդարև ես ալ
 էրէկ առաւօտ առի ատենագրութիւնն, և շնոր-
 հակալ ենք Մայր—Ղիւսնէն, բայց կան երեւ-
 փոխաններ ալ որք Պոսֆօրի կողմերն և այլ
 հեռաւոր արուարձաններ կը բնակին և չ'են
 կրնար ժամանակին ստանալ իրենց ատենա-
 գրութիւններն : Աւտի կ'առաջորկեմ որ այդ-
 պիտիք կամ Պօլսոյ և կամ Ղալաթիոյ կողմե-
 րը մէկ մէկ որոշեալ տեղ զոչոյ տան բարագա-
 նաց , որպէս զի կ'արեւան ընդունիլ ժամա-
 նակին :

Թեր ու զէմ փոխանակեալ կարծեաց վը-
 բայ , Ատենագրեալ էֆէնտի ժողովոյ կամաց կը
 շիմէ որ ԿՈՐՈՇԷ յաջորդ նստին թողու ըրո
 նստին ատենագրութեան վաւերացումը :

2.

Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝

Կարապետ	էֆէնտի	Ի.թիւսեան
Սիմօն	»	Յեւէկեան

անձնական տկարութեան պատճառաւ ժող-
 վոյ այս աւուր նիստէն բացակայ մնալին զը-
 րով հաղորդած լինելով Ղիւսնին , Ատենագրեա
 էֆէնտի , իբր օրինաւոր բացակայք նշանակել
 կուտայ նոցա անուանքն 'ի սուսարի ներկայու-
 թեան :

3.

Ծանօթութիւն 'ի Մայր-Ղիւսնէ յաղագս
 Մերեմ—Գուլի կեօեմտիի Երեսփոխանական
 խեղդոյն .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որպէս կը յիշէք ,
 ժողովը իւր չորրորդ նստին մէջ պաշտօն յանձ-

նած էր Գիւսնիս , Մերեւիմ—Գուլի էֆէնտիի
 երեսփոխանական ծանօթ խնդրոյն առթիւ
 բանակցել իրեն հետ . հետեւաւոր ըստ յանձ-
 նարարութեան ժողովոյդ , փութացինք իրեն
 հետ բանակցելով համոզել զինքն այլ եւս չի
 պիտի իւր հրաժարականին վրայ , որ Ազգա-
 յին ժողովն երկուս մերժած էր : Եւ 'ի պա-
 տասխանի մեր պաշտօնագրին , Մերեւիմ—Գու-
 լի էֆէնտի եւս հետեւեալ նախնի յաւճ է :
 Ահաւտիկ սոյն թղթակցութեանց պատ-
 ճէնք :

Մեծապատիւ էֆէնտի .

'ի պատասխանի Ձեր 14/26 Հոկ-
 տեմբեր 1882 թուականաւ , յԱզգային
 Երեսփոխանութենէ հրաժարագրին , նո-
 բրա թիւրիմացութեան արդիւնք նկատ-
 ուած՝ և հետեւաբար Ազգ. ժողովէն
 ընդունուած չըլլալն , նոյն ամսոյ 16
 թուական պաշտօնագրով Ձեզ հաղորդ-
 ուած է : Սակայն ձեր Մեծապատուու-
 թեան , յայնմ հետէ , իւր աթոռէն բա-
 ցակալ մնացած ըլլալու պարագան , Ե-
 րեսփոխանական ժողովոյ ուշադրութիւ-
 նը գրաւած , և մասնաւոր հարցման
 նիւթ եղած էր , Ձեր պաշտօնակցաց
 կողմանէ ներկայ նորաշրջանիս Դ րո- նըս-
 տին մէջ :

Ազգային ժողովը վերահաստատելով
 Ձեր հրաժարագրի մերժումը , իւր Դի-
 ւանին յանձնարարեց , խնդրոյն պարա-
 գայներն պարզելով , վախճան տալ սոյն
 անորոշ վիճակին , և շարժանն 'ի գործ
 դնել , հրաւիրելու համար զՁեզ 'ի պաշ-
 տօնավարութիւն ազգին երեսփոխանու-
 թեան :

Արդ՝ նկատելով թէ , Ազգային ժո-
 ղովոյ որոշման վրայ , առ ձեզ ուղղեալ

պաշտօնագրոյն պատասխանը վերապահած էք, նոյն նստաշրջանին է. Ը. Թ. նստերու վաւերացեալ ատենագրութեանց հրատարակութիւնը տեսնելու, և անտի իրաւունք ստացած էք Ձեր ելրեսփոխանական պաշտօնէն հեռի մնալու մինչեւ ցարդ :

Եւ նկատելով դարձեալ թէ, որչափ իրաւացի պատճառներ ալ ունեցած ըլլայիք, Ձեր հրատարին, բարձուած պէտք էին համարուիլ նոքա, այն նոր եռանդին ու խոհականութեան չնորհիւ, որ կը տիրէ այժմ ժողովին մէջ :

Եւ ըստ որում Ազգային ժողովի չէ ուզած և չուզէր ընդունիլ Ձեր հրատարականն, և Ձեր գործակցութեանն ազդողուտ ծառայութիւններ կ'ակնկալէ :

Դիւանս՝ պատշաճ կը դատէ, իրեն տրուած արտօնութեան վրայ յենելով, անցելոյն պատկանող խնդիրներն չի յուղելու համար, կոչումն ընել Ձեր ազգասիրութեան, և հրաւիրել զՁեզ որ բարեհաճիք վերստին ստանձնել Ձեր երեսփոխանական պաշտօնավարութիւնը, որ այնչափ արդիւնաւորապէս վարած էք, երկար առեն :

Այսու առթիւ նուիրելով Ձեզ մեր յարգանաց խորին հաւատարիքն,

Մնամք

Ի դիմաց Ազգ. ժողովոյ

Ատենազպիր Ատենապետ

Յ. Արշակունի Տ. ԵՆԱՍՏԱՅԵԱՆ

11 Օգոստոս 1884

Կ. Պոլիս

Վսեմապատիւ Ատենապետ Էֆէնտի

Ազգային ժողովոյ

Պատիւ ունեցայ ընդունիլ Մայր—Դիւանիդ Օգոստոս 11 թուակիր պաշ-

տօնագիրն որ՝ Ազգ. ժողովէն առ ինքն տուեալ արտօնութեամբ՝ կը հրաւիրէ զիս վերստանձնել զպաշտօն Երեսփոխանութեան, յայտարարելով թէ իմ հրատարման պատճառներն բարձուած պէտք է համարուին, և կոչումն ընելով ինձ անցեալը չյուզել ազգասիրաբար :

Մինչ ես իմ հրատարագրոյն մէջ, որ 'ի 14 Հոկտեմբերին 1882, անկեղծօրէն 'ի վեր կը հանէի այնպիսի կէտեր՝ որք յօգուտ ազգային շահուց պէտք էին յայտնուիլ, անարդար էր անշուշտ տեսնել թէ թիւրխմացութեան արդիւնք նկատել ուզուի իմ հրատարականն, իսկ արդ թէ Ազգային ժողովոյ վերջին որոշման մէջ և թէ՛ Մայր-Դիւանիդ պաշտօնագրոյն մէջ փայլած արգարախոհ ոգւոյն առջեւ հարկ կը ինի տեղի տալ և լուսութեան միջ թաղել բաղում անցեալ պարագաներ, որք համաձայն չէին Երեսփոխանութեան պատուոյն պահպանման, և որոց նորոգումն յուսալի չէ այսօր, պէտքերուն տուած դասէն յետոյ, և ժողովոյն արգի վիճակին մէջ :

Ուստի յիշեցնելով յատկապէս թէ ժամանակի պակասութիւնն էր իմ հրատարի պատճառն, իսկ միւսներն շարժառիթ, կը խոնարհիմ Ազգ. ժողովոյ որոշման առջեւ, եթէ կը բարեհաճի հաւանիլ որ ոչ թէ սրտիս եռանդեանն՝ այլ ժամանակիս չափուն համեմատութեամբ աշխատակցիմ իմ պատուարժան պաշտօնակցաց, մանաւանդ զի աւերորդ իսկ է իմ աշխատակցութեան մեծ կարեւորութիւն ընծայել :

Մարդեւոյն որ՝ բաղմակարօտ Ազգիս պիտոյքը զոհանջելու նպատակու՝ պատ-

կառուիլի Ժողովոյդ ջանքերն յաջողութեամբ պսակին ,

Մնամ մեծարանաց հաւատեօք
Յ. Մերեհմ-Գուլի

16/28 Օգոստոս 1884
Բերա

(Յեք էնէրցոն)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որպէս կը տեսնէք , Գիւտան հրաւր կարգայած է Մէրեհմ-Գուլի էֆէնտի որ առանց այլ եւս հին խնդիրներ յուզելու , դայ եւ վարէ իւր երեսփոխանական սղառօնն , և շնորհակալ եմք որ ինքն եւս սիրոյցօժար պատասխանած է մեր հրատէրին :

ԶԱՅՆԵՐ — Մէնք ալ շնորհակալ եմք :

4

Հարցում Համբարձում էֆ. Մագպուլեանի ՚ի մասին Ազգային կալուածական խնդրոյն

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր սղառօնակցներէն Մագպուլեան էֆէնտի կողմանէ հետեւեալ հարցումն կայ Գիւտանի վրայ զոր կը ժողովամ հարցողել ժողովոյդ :

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի
Ազգ. Պատկ. Ընդհ. Ժողովոյ.

Պատիւ ունիմ Ազգ. Պատկ. Ժողովոյ աշաւուրջ ուշադրութեան ներկայել յետագայ խնդիրն՝ որ մեծ կարեւորութիւն ունի ըստ իս :

Բարձրագոյն Դրան վերջին որոշման համաձայն տեղի ունենալիք ազգահամարն ինչպէս ժամօթ է ամենուս , խիստ

օրէնքներով օժտեալ ամենտյն անաչառութեամբ ՚ի գործ գրուելու վրայ է և թէ յիշեալ օրինաց մի յօդուածի արամադրութեան համաձայն՝ ո և է կալուածատէր ամեն պարագայի պարտական է ՚ի ձեռին ունենալ ազգահամարի ըստացադիրն :

Ուստի կ'առաջարկեմ հարցնել Ազգային վարչութեան թէ մեր ազգային կալուածոց համար , որք ժամանակէ մը ի վեր գոյութիւն չ'ունեցող անձանց անուններու վրայ դարձուած են , ի՞նչ միջոց խորհած է ձեռք առնուլ , ապագային Ազգ. կալուածներն ո և է վտանգէ դերծ պահելու համար :

Խնդրելով որ բարեհաճիք ներկայ առաջարկս յղել Ազգ. Պատկ. վարչութեան առ ՚ի պարտու պատշաճ տնօրինութիւն ,

Կը մնամ յարգանքօք

Ազգային երեսփոխան

Հ. Մագպուլեան

16 Օգոստոս 1884

Ղալաթիա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք , սոյն հարցումն ողջեալ է առ Ազգային վարչութիւն , հետեւաբար կը յղուի նմա ՚ի նկատառումն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ անցեալ շըրջանի ատենագրութիւնք արժողովին հրատարակուած լինէին այսօր , որպէս այժմ կը հրատարակուի արդի Մայր-Ղիւտանի ջանից շնորհիւ , պիտի տեսնուեր թէ այդ հարցման համեմատ՝ չեմ գիտեր հարցում թէ առաջարկուի լին մ'ըբած եմ ժամանակին վարչութեան , և խնդրած որ բարեհաճի ցուցակու մը հարցողել Ժողովիս թէ՛

1. Ո՞ք են այն ազգայինը, որոց անուան վրայ աւանդարար Ֆերաղ եղած են ազգային հաստատութիւնը կամ անոնց սեփական կալուածք :

2. Ո՞ք են այդ հաստատութիւնը կամ կալուածք և ո՞ր թաղեն կամ հաստատութեան կը վերաբերին :

3. Ի՞նչ աստիճանութիւն կայ այդ աւանդից անկորուստ պահպանութեան :

Բայց դժբաղդարար խնդրուած այդ ցուցակն տակաւին չ'ներկայացաւ ժողովն :

Պէտք է գիտնալ Երեսփոխան էֆէնտիներ, որ եկեղեցեաց կալուածատէր լինելու խնդիրն խորին ուշադրութեան արժանի է, իսկ այժմ՝ առաւել բան երբէք :

Ուստի հարկ է որ Վարչութիւնն լուրջ կերպիւ զրադի սյապիսի կենսական խնդրոյ մը մէջ, ինչպէս որ ալ սկսած է զրադիւ կարծեմ, վրան զի ազգային կալուածոց արդի փոխանցական դրութիւնն կրնայ վտանգաբեր լինիլ մեզ :

Կան նաեւ շատ մը ազգային սեփական կալուածքներ ալ որք մասնուորաց վրայ իրբեւ աւանդ Ֆերաղ եղած և որոց մեծ մասն անխնամ վիճակի մէջ մնալով՝ սկսած են հետաքրքրեալ մտայնութեան մատնուիլ :

Ուստի կը խնդրեմ որ երբ Մտազուլեան էֆէնտիի այդ հարցազիրն Վարչութեան յընդունի, լծորդուի նաեւ անոր նախապէս իմ կողմանէ ելած նոյն հարցումն ալ, որպէս զի Վարչութիւնն ամենուն մեկանց պատասխաններն հաս ըրէք :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊՍ. — Պէտք չ'է կարծեմ գտախարիլ, Երեսփոխան տեսարք, որ այս փոփոխ խնդիրն աստ յուղուի, զի այս մասին տեղի ունենալիք վիճարանութիւնք, ինչ որ ալ լինին, կրնան վնասորբ ըլլալ :

Արդարեւ խնդիրն ծանր է և լուրջ նկատողութեան արժանի, սակայն հարկ է գիտնալ նաեւ որ Քաղ. Ժողովն, իր վերջի նըստին մէջ այս մասին դարձան տնօրինել որոշած է և կրնաք ապահով ըլլալ :

տին մէջ այս մասին դարձան տնօրինել որոշած է և կրնաք ապահով ըլլալ :

ՁԱՅՆԵՐ — Շատ ճշմարտ է :

ՄԱԿՊՈՒԼԵԱՆ Հ. ԷՖ. — Ըստեցաւ թէ Քաղաքական Ժողովն այս խնդրոյ համար զարժանն տնօրինել որոշած է : Բայց ես աւելի առաջ երթալով կըսեմ թէ՛ այսօր բացարձակ պէտք և ստիպողութիւն կայ որ Պատրիարքարանն ուղղակի Բ. Կրան ղրկուելով հարցընէ թէ այս խնդրոյ մասին ի՞նչ ընել հարկ է :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Թէ և ես Տնտեսական Խորհրդոյ անդամ չ'եմ, բայց իբրեւ Մայր—Եկեղեցեաց Թաւ. Խորհրդոյ անդամ՝ կուզամ յայտնել թէ մեր Եկեղեցեաց սեփական ամբողջ կալուածոց վիճակացոյց պատկերն պատրաստելով յղած եմք Քաղաքական Ժողովն, և կարծեմ որիք թաղեր եւս առ այս սկսած են պատրաստուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը փութամ ղրկուել տալ Պատ. Երեսփոխանացի որ այս հարցումն տակաւին խնդիր եղած չ'է, որպէս զի կարելի լիներ վիճարանիլ անոր վրայ, ուստի հարկ է որ այս սլորդ հարցազիրն, իւր բնական վիճակին մէջ յըստի Վարչութեան, և երբ տեղեկագիրն գալով՝ անցնի օրակարգին մէջ, յայնժամ միայն երեսփոխանք, ըստ կարգի իրեանց, ազատ են խօսք աւանուլ, մամաւանդ թէ՛ ինչպէս որ ղրկուել տուին մի բանի երեսփոխանք, այժմէն ծանրանալ այս խնդրոյ վրայ, կրնայ վնասաբեր լինիլ :

Յամենուտ երեսփոխանք ճայնակելով Ատենական էֆէնտիի յայտարարութեան, ԿՈՐՈՇՈՒԻ Մտազուլեան Հ. էֆ.ի կողմանէ ներկայացուել այն հարցազիրն յղել Վարչութեան Քաղաքական Ժողովոյն 'ի ներատուումն :

5.

Հարցումն Տ. Խորէն Նար-Պէյ Սրբազան 'ի մասին Պէկեան Թ. Է. Բ. Ի երեսփոխանական խնդրոյն

Տ. Ն. ԱՐՔԵՊԻՍՏ. ՆԱՐ-ՊԵՅ — Կը յիշէ անշուշտ Պատ. Իրևանք որ նախորդ նվատերէն միոյն մէջ Հարցում մ'ուզողած էր 'ի մասին Պէկեան էֆէնտիի երեսփոխանութեան վաւերացման խնդրոյն :

Այժմ եւս հարկ կը նկատեմ վերակրկնել զնոյն հարցում :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Բ. — Պէկեան էֆէնտիի խնդիրն, ինչպէս գիտէք, ըստ որոշման Ժողովոյ, անցած է մեր խնդրոյ կարգի տուած ընդ մէջ և կ'սպասէ իւր Օրակարգին :

Տ. Ն. ԱՐՔԵՊԻՍՏ. ՆԱՐ-ՊԵՅ — Ստիպյն կը տեսնեմ, Ատենապետ էֆէնտի, որ Օրակարգն փոխուած չ'է այն վայրիեաննէն 'ի վեր 'ի բաց տեսել Երուսաղիմայ խնդրոյն մասին վարչութեան կողմնէ ներկայանալի տեղեկագիրն :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Բ. — Երբ մեր այսօրուան Օրակարգին մէջ նշանակեալ խնդիրներն սպասին, յայտնամ 'Իրևան կը պարտաւորի խընդրոց կարգի տուածարի շարքէն առնուլ և Օրակարգի միջոցաւ Ժողովոյ ներկայել 'ի պարտ ու պատշաճ անօրինութիւն : Ստիպոյն այս պարտ ու պատշաճ անօրինութիւն : Ստիպոյն այս պարտ ու պատշաճ անօրինութիւն ուղէ տալ, այլ է :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. Է. Բ. — Երեսփոխանի մը ընտրութեան վաւերացման խնդիրն Ժողովոյ համար կենսական կարեւորութիւն ունեցող խնդիրներէն մին է : Եթէ ամեն երեսփոխանաց ընտրութեանց վաւերացման խնդիրներն պատշաճ 'Իրևաններու յղուին և յա-

պաղին պատասխանք, թերեւս օր մը այս ընթացքով 20-25 երեսփոխանաց ընտրութիւնք եւս մնան անվաւեր, որ մեծ զրկանք մ'է Ազգին կողմնէ ընտրեալ երեսփոխանի մը :

Ուստի եւս կ'ստաջարկեմ որ Ժողովն սրտէ միշտ երեսփոխանական ընտրութեանց վաւերացման առաջնութիւն տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Բ. — Կարճեմ Սաբնեան էֆէնտի Ժողովոյ վերջի նխաերէն բացակայ մնացած լինելով, չէ կրցած զիտնալ նաեւ թէ՛ այս խնդիրն որովաի երեսփոխանէ անցած է : Ուստի կը վաւթամ երկու խօսքով պարզել իրեն խնդրոյն վիճակը :

Պէկեան էֆէնտիի խնդիրն երեսփոխանի մը վաւերացման սովորական խնդիր լինելէ դադարած և մասնաւոր խնդիր մ'եղած է :

Պէկեան էֆէնտիի՝ երեսփոխան կարենալ լինելու կամ ոչ խնդիրն սակից տալով նախորդ Մայր-Իրևանին քննութեան յանձնուած էր, որ բերելով իւր տեղեկագիրն, ըստ որոշման Ժողովոյ, անցաւ 'ի խնդրոց տուածարի, և որ ըստ իւր կարգին պիտի անցնի Օրակարգին մէջ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. Է. Բ. — Բայց ես սցնակս կը կարճեմ և համոզեալ իսկ եմ, որ նոյն իսկ երեսփոխանական Ժողովն չ'ունի իրաւունք ու է պատճառաւ պարտալ թողուլ երեսփոխանական անթու մը :

Երբ այս զխոտղութիւններն կ'ընեմ, թող չ'կարծուի թէ զՊէկեան էֆէնտի կ'անձնաւորեմ. բնաւ երբէք, այլ իրբեւ սկզբան պարզ խնդիր մը կուզեմ խօսիլ անոր վրայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. Է. Բ. — Յայտարարեցէք Ատենապետ էֆէնտի թէ՛ արգարեւ օրինաւոր չ'է երեսփոխանի մը ընտրութիւնն յետաձգել սակայն Պէկեան էֆ. Ի խնդիրն տարբեր է և այս պարագայիս մէջ իր բացատրութիւն մը պէտք է նկատել :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Բ. — Արդէն խնդրոյն վի-

ճանի պարզեցնել մեր ազնիւ պաշտօնակցին , յայտնելով թէ տեղեկագիրն եկած , ժողովոյս ներկայացուած և ըստ իւր որոշման՝ անցած է 'ի խնդրոց կարգի , և որ ըստ իւր կարգին պիտի անցնի 'նաեւ Օրակարգի մէջ : Ուստի կը խընդրեմ որ այլ եւս չը պնդէ անոր վրայ :

Ձայս ասելով Ատենադէտ Էֆէնտի և յայտնելով միանգամայն թէ ատենական դործողութիւնք վերջնացած են , կանցնի Օրակարգի միւս խնդրոցն :

Բ.

Ընտրութիւն նյութակոմ Յանճնախմբի

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՃ. — Որպէս գիտէք , ժողովք իւր վերջին գումարման մէջ որոշած էր Օրակարգի Բօլ խնդիր ընել Եւրոպական Յանճնախմբի ընտրութիւնն , սակայն տարգրական սխալմամբ հրատարակուող մէջ դարձեալ իբրև Գօլ խնդիր նշանակուած է : Ուստի կը մնայ ժողովոյդ որոշել թէ կազմ՞ առաջնութիւն տալ անոր թէ չ'է անցնիլ նախ Առաջնորդական խնդրոցն որ մեր Օրակարգի Գօլ խնդիրն է :

ՍՂՎԱՃԵԱՆ Կ. ԷՃ. — Կ'առաջարկեմ նախ՝ Եւրոպական Յանճնախմբին ընտրել և ապա անցնիլ Առաջնորդական խնդրոցն :

ՋԱՆԱՋԱՆ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ — Այո , նախ Եւրոպական խնդիրն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՃ. — Քանի որ ժողովք կը վիճարի առաջնութիւն տալ Եւրոպական Յանճնախմբի ընտրութեան , ուստի Դիւանս կը ստիպուի ներկայել Ձեզ եօթն անձանց սրբագրելի մի ցանկն , յայտնելով միանգամայն թէ այդ ցանկէն դուրս թողած է վարչութեան

անդամներն , վասն զի արդէն անոնց հետ է որ պիտի գործէ ընտրելա Յանճնախմբին :

Սոյն ցուցակն զեղջէլի և սրբագրելի է , և հետեւաբար քուէարկութեան քահանայապետ են երեսօթիսմանք ըստ կամայ փոփոխել զայն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Կարճեմ քուէարկութեան իսկ հարկ չ'կայ , և անուանական կոչմամբ եւս կրնամք ընտրել :

ՋԵՐԱՋ Մ. ԷՃ. — Մեր ներքին կանոնագիրն կը հասխարակի Փափազեան Էֆ.ի այդ առաջարկութեան , եւ կը տրամադրէ որ ու է Յանճնաժողովոյ մը ընտրութիւնն քուէարկութեամբ տեղի ունենայ :

ԲԱՃՄԱԹԻՒ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ — Հարկ չ'կայ մասնաւոր քուէարկութեան որ կրնայ ժամանակի կորուստ պատճառել : Թո՛ղ տնուանական կոչմամբ ըլլայ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՃ. — Ուրիմն հարկ կ'ըլլայ խնդիրն ժողովոյդ քուէին ենթարկել :

Հետեւաբար քուէարկութիւն կատարուելով , ժողովն միտձայնութեամբ կ'ՈՐՈՇԷ Եւրոպական Յանճնախմբի ընտրութիւնն կատարել անուանական կոչմամբ , Մայր-Դիւանին կողմանէ սրբագրելի ցանկին վրայէն :

(Սոյն քուէարկութեան մէջ երկու երեսփոխանք ձեռնպահ կը մնան) :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՃ. — Քանի որ ժողովք միտձայնութեամբ որոշեց , այլ եւս օրինական արգելքն բարձուած է անուանական քուէարկութեան դէմ :

ՋԱՆԱ ՄՐ — Յանճնախմբի անդամայնութիւն քանի՞ է :

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ — Եթը :

Տ. Խ. ԱՐԲԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՑ — Եթին
Թիւը շատ է :

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ է գիտնալ որ
Ձեր Գիւանն Ելմտական խնդրոյն վրայ յայտ-
նուած զանազան կարծիքներն 'ի նկատ առնելով,
պէտք տեսած է Յանձնախմբին անդամոց թիւն
եօթի վերածել :

Ձայս ասելով, Ատենապետ էֆէնտի կը
հրահրէ զԱտենադպիր էֆէնտի ընկերունւ
նոյն զեղջեղի ցանկն , որ է :

- Յովհաննէս էֆէնտի Նուրեան
- Գաբրիէլ » Նորատունկեան
- Կարապետ » Սըվաճեան
- Յովհաննէս » Թորոսեան
- Մկրտիչ » Ճանըմեան
- Ստեփան » Փափաղեան
- Մինաս » Ձերազ

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ
այդ ցանկին մէջ դրուի նաեւ Մէրէնէմ-Գուլի
էֆէնտի անունն :

ՅԵՐԱՋ Մ. ԷՖ. — Ես եւս կ'առաջար-
կեմ որ իմ տեղս Մէրէնէմ-Գուլի էֆէնտի
անունն նշանակէք , վասն զի, ինչպէս արդէն
գիտէք , այս խնդրոյս մէջ ես ձեռնադրած էի և
հետեւաբար չ'եմ կարող անդամակցել այդ
Յանձնախմբին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կը փափարիմ
որ Ձերազ էֆէնտի այդ Յանձնախմբին մէջ
մտնէ, որպէս զի առիթ ունենայ տեղի ունեցած
զեղծմունք 'ի մտանց տեսնել : Իսկ գալով ինձ,
կ'առաջարկեմ իմ տեղս Քրիստոստոր էֆէն-
տին ընտրել որ փորձառութիւն ալ ունի , վա-
սըն զի ես խռովարար մեկն եմ եղեր և կըր-

նայ ըլլալ որ հոն ալ խռովութիւն մը յարու-
ցանեմ :

ՍԸՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես փափաղեան
էֆ.ի ներկայութիւնն այդ Յանձնախմբին մէջ
անհրաժեշտ կը նկատեմ :

ՅԱՅՆԵՐ — Այո՛ , կը ձայնակցինք :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ուրեմն Ձերազ էֆի
ներկայութիւնն ալ կարեւոր է :

ՍԸՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Այո՛ , հարկ է որ
տոյն երկու ընդդիմախօս երեսփոխանք եւս
գտնուին այդ Յանձնախմբին մէջ , որպէս զի
երբ տեղեկագիրն գայ , յայնժամ եւս նորա-
նոր վիճարանութեանց զոներ չ'բացուին :

ՅԵՐԱՋ Մ. ԷՖ. — Կը պնդեմ հրաժարու-
կանիս վրայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ նոյնպէս :

ՅԱՅՆԵՐ — Քուէի դռէք ցանկն , Ատե-
նապետ էֆէնտի , հրաժարական չ'ենք ընդու-
նիր :

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսու ուրեմն կը իու-
թամ այն ցանկն նոյնութեամբ ժողովոց բու-
էին ենթարկել և յետ օրինաւոր ընտրութեան,
եթէ հրաժարողներ գտնուին , այն տեսն յու-
ղովը զարժանն կը տնօրինէ :

Ձայս ասելով, Ատենապետ էֆէնտի ժո-
ղովոյ բուէին կ'ենթարկէ ներկայացեալ ցանկն
որ միաձայնութեամբ կը ՆՐԵՒՈՒՆՈՒԻ և հետեւա-
բար ժողովը Ելմտական Յանձնախմբի անդամ
կը ՀԻՉԱԿէ :

- Յովհաննէս էֆէնտի Նուրեան
- Գաբրիէլ » Նորատունկեան

Վարապետ	էֆէնտի	Սըվաճեան
Յովհաննէս	»	Թորոսեան
Մկրտիչ	»	Ճոնըմեան
Ստեփան	»	Փափաղեան
Մինաս	»	Զեբաղ

(ՅԵՊ ԿՈՒՆՍՏԱՆՆԵՐԷՆ)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Քիչ մ'առաջ ըսուեցաւ թէ՛ գուցէ ապագային մէջ ալ նորանոր վիճարանութեանց դռներ բացուին Եւրոպական խնդրոյն առթիւ։ Ես վիճարանութեանց կարեւորութիւնն և օգտակարութիւնը ըմբռնողներէն եմ՝ և միայն սարգսպն պիտի հաստատէ թէ՛ սոյն Եւրոպացիցին վրայ 3-4 նիստերու մէջ տեղի ունեցած վիճարանութիւնքի նէջ արդիւնք կրցած են արտադրել։

Գալով ներկայ Յանձնախմբի գործառնութեանց, այժառ չէ՛ կարծել որ անոր պաշտօնըն պիտի ըլլայ լոկ տեղեկագիրք մը պատրաստելով բերել այս ժողովրս. այլ բոլոր Եւրոպական և դրամական խնդրոց մէջ Վարչութեան հետ համախորհուրդ պիտի գործէ։ Այսպէս կըր'րոճեմ ես և կը փափաքիմ որ այժմէն ճըշգուրի այս կէտը։

ՍՐՎԱՋԵԱՆ Կ. ԷՅԹ. — Ես կը կարծէի թէ՛ Յանձնախմբին լիազօր իշխանութիւն պիտի ունենայ, ուստի հարկ է նախ անոր գործառնութեան և իրաւասութեան սահմանըն դժել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Արդէն Յանձնախմբի պաշտօնն զժողով է բուհարկեալ բանաձևին մէջ։ Սա Վարչութեան հետ բանակցեալ, երբ Եւրոպական խնդրոյ նկատմամբ որ և իցէ անօրէնութիւն մ'ընէ, բնական է որ Վարչութիւնն իրրեւ գործադիր իշխանութիւն լինեն պիտի անօրինէ այն խնդիրներն որ իւր Զեռնհասութեան սահմանին մէջ կը գտնէ։ Իսկ հակառակ պարագայի մէջ՝ բնական է որ

Յանձնաժողով և Վարչութիւն պարսին իրենց տեղեկագիրքն ուրոյն պատրաստել կամ համաձայնութեամբ բերել Ազգային-Ժողովոյս։

Ուստի այժմէն Յանձնաժողովը պաշտօնագրժութեան մասին խնդիր յարուցանելն աւելորդ է։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Այդ յայտարարութիւնը բաւական է։

Գ.

Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտոց բարձման.

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷՆ — Երուսաղիմայ խնդիրն ո՞ր մնաց։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Այդ մասին տակաւին Վարչութիւնն իւր տեղեկագիրքը չէ՛ բերած ժողովոյս, ուստի կը մնայ մեզ անցնել Օրակարգի միւս խնդրոց։

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅԹ. — Կարելի է՞ արդեօք որ Քաղաքական ժողովը ներկայ անգամ ներէն մին երկու խօսքով բարեհաճի մեզ տեղեկութիւն մը ապա Երուսաղիմայ պարտոց խնդրոյն և իւր բերելք տեղեկագիրքի մասին։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Յաւալի է որ Քաղ. ժողովէն ոչ ոք ներկայ կը գտնուի այսօր որ հարկ եղած բացատրութիւնը տայ, ուստի իբրեւ Յանձնաժողովը անգամ՝ ես կուզամ տալ այդ մասին համառօտ տեղեկութիւն մը։

Ժողովոյդ կողմանէ կորդեալ Յանձնաժողովս թէ՛ և իւր առաջին նիստն ըրաւ ընդ Վարչութեան, և ուղեց ուղղակի մասնէ խնդրոցն մէջ, բայց սկզբան մասին կարելի չ'եղաւ համաձայնել Վարչութեան հետ, հետեւաբար հարկ եղաւ ՚ի գաւառս զինչորական սուրբ վճարող ազգայնոց ցուցակներն ՚ի ձեռին ու-

նենալ, որ սկզբան որոշման համար իրրեւ հիմ պիտի բռնուին, և առ այս՝ հարկ եղած հըրահանդէն յղուեցան գումարական վարչութեանց: Սահայն անցեալ օր Գաղաթական ժողովոյ Ատենապետ Պէյէն տեղեկացոյ թէ՛ խնդրուած այդ ցուցակներն ց'որդ ամբողջովին չ'են հասած և հարկ կըլլայ սպասել:

Ահա այս է յիշեալ տեղեկագրին յսպաղման պատճառն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Ազգային վարչութիւնն ուղեց զխնալ թէ՛ իւրաքանչիւր կուսակալութեան ներքեւ գտնուող Հայք տարին որքա՞ն գումար կը վճարեն իրրեւ զինւորական տուրք:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ուրեմն հարկ կ'ըլլայ առ այժմ՝ այդ խնդիրն վերցնել մեր Օրակարգէն, վասն զի մարդահամարի գործադրութիւնք գուցէ 10—12 տարիէն շտաւարտին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ վարչութիւնն տակաւին ժամանակի կը կարօտի այդ տեղեկագրին պատրաստութեանն համար, Դիււանիս ալ կարծիքն է՝ առ այժմ՝ այդ խնդիրն վերցնել իւր Օրակարգին մէջէն, և երբ վարչութիւնն դայ յայտնէ թէ՛ պատրաստ է տեղեկագիրն, յայնժամ կրնամք վերստին Օրակարգ անցնել Երուսաղիմայ խնդիրն:

ՁԱՅՆԵՐ — Այո՛, շատ օրինաւոր է:

Յամենուստ երեսփոխանք հաւանելով Դիււանին կողմնէ եղած ոոյն առաջարկութեան, ԿՐՈՐՈՇՈՒԻ առ այժմ բռնուլ Օրակարգէն «Երուսաղիմայ պարտուց բարձման խնդիրն»:

Դ.

Ընտրութիւն Գրք Ատենադպրի Ազգ. ժողովոյ

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ երրորդ Ատենադպրի խնդիրն ալ վերնայ Օրակարգէն, վասն զի արգէն տաւջին և երկրորդ Ատենադպրի էֆէնտիք կը գործեն, 'ի գոհունակութիւն ամենեցուն, և երրորդի մը տէտարն առ այժմ՝ զգույի չ'է, մտնաւանդ թէ՛ ժամանակն ալ անցած է:

ՉԵՐԱՋ Մ. ԷՖ. — Օրինաւոր չ'է. Դիւանն իւր ամբողջութիւնը ունենալու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Այն խնդրոյ նկատմամբ երեսփոխանաց մէջ մասնաւոր կարծիքներ փոխանակուած միջոցին.) Ամեն պարագայի մէջ, հարկ է որ Մայր—Դիւանն իւր կազմակերպութիւնն գտնէ: Ուստի Դիւանս կ'առաջարկէ որ տասնց քուէարկութիւն կրտարուու, երրորդ Ատենադպրի պաշտօնն յանձնուի մեր նորեկ երեսփոխաններէն Տամատեան Ստեփան էֆէնտիի:

Սոյն առաջարկութեան մասին ևս Երեսփոխանք իւրեանց հաւանութիւնն յայտնելով, Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ Գրք Ատենադպրի կ'ը շնորհակալ:

Ստեփան էֆէնտի Տամատեան

Ե.

Առաջարկութիւն խառն ժողովոյ 'ի մասին Առաջնորդական խնդրոյ և տեղեկագիր նախաձեռնութեան Դիւանին.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ՝ ժողովոյ կ'անցնի Առաջնորդական խնդրոյ մասին խառն ժո-

զովոյ կողմանէ ներկայացեալ առաջարկութեան վիճարանութեան :

Սահայն հարկ է գիտնալ թէ սյդ առաջարկութիւնն ասկից առաջ, ըստ որոշման ժողովոցս, յըւած էր առ Նախաձեռնութեան Կիւսնն Դիւանապետութիւն, որոյ տեղեկագիրն եւս կցեալ է Վարչութեան ներկայ սյաշտանագրին : Ուստի կը հրաւիրեն Ատենադպիր Էֆէնտին ընթեռնուլ նախ Վարչութեան առաջարկութիւնն և ապա Նախաձեռնութեան Կիւսնի տեղեկագիրն :

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի Ազգային Պատկառելի Ժողովոյ.

Ազգային Վարչութեան Խառն Ժողովն Թուրքիոյ գաւառաց առաջնորդական վիճակաց թափուր և անխնամ մընալն, զոր իւր խորին ուշադրութեան առարկայ ըրած էր, իւր վերջին գումարման մէջ վերստին նկատողութեան առնելով և տեսնելով որ առաջնորդական վիճակք այլ և այլ պատճառներով առաւանջ հոգեւոր հովուի և պաշտօնական ներկայացուցչի կը մնան. նկատելով որ գաւառներն երբ տեղական կառավարութեան քով չունենան իրենց պաշտօնական ներկայացուցչին, որ տեղական իշխանութեան և գաւառին ազգայնոց միջև յարաբերութեան միջնորդ է, առաջնորդական վիճակաց ընդ տեղական կառավարութեան և ընդ Ազգային Պատրիարքարանի ունենալիք յարաբերութիւնք ըստ արժանւոյն չեն կատարուիր, հետեւագէտ դաւառարնակ ազգայնոց ամեն կարևոր խնդիր և գործ բաղձացուած դիւրութեամբ չեն կարգադրուիր, որ դաւառացի ազգայնոց բարոյական և նիւթական շահուց մեծագէտ կը մնասէ. և նկատելով միանգամայն որ իւրօրան.

չիւր գաւառի մէջ առաջնորդի ներկայութիւնն հարկ անհրաժեշտ է, իւր հովուական ինամոց յանձնեալ ժողովրդեան բարւոյն և զարգացման, և տեղական ազգային գործոց բարեկարգութեան փոյթ տանելու համար, Խառն Ժողովն այս պարագայից առջեւ ստիպուած է այն ամեն հայաբնակ գաւառաց մէջ, որք առաջնորդ չունին, և ըստ արամադրութեան Ազգային Սահմանադրութեան՝ առաջնորդի ընտրութիւն կատարելու դիւրութիւն չ'կայ, և դիւրութիւն ունենալու ամեն միջոց կը պակսի տակաւին, Ազգային Պատրիարքարանի կողմանէ առաջնորդ կարգել իրբև առժամեայ բացառիկ տնօրինութիւն, մինչև որ Խառն Ժողովոյ կողմանէ առաջնորդական վիճակներն որ կողմակերպութեամբ սահմանելու Դիւանապետ կարգեալ Խառն Յանձնաժողովն բերէ իւր ծրագիրն Ազգային Վարչութեան Խառն Ժողովոյ, որ զայն Պատկառելի Ժողովոյդ հաւանութեան ենթարկելէ յետոյ՝ ըստ արամադրութեան Ազգային Սահմանադրութեան գործադրութեան պիտի ընէ :

Արդ՝ Խառն Ժողովն յառաջ քան զգործադրութիւն սորին, պատշաճ համարեցաւ զայս իրբև Վարչական առաջարկ՝ Պատկառելի Ժողովոյդ հաւանութեան ենթարկելու :

Ի դիմաց Խառն Ժողովոյ Ազգային
Կեդրոնական Վարչութեան
Կրօնական Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Վահան Վարդ. Խ. Արքեպիս. Նար-Պիյ
Քաղաքական Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Նշան Ալվազեան Ս. Մարտիտեան

Վսեմափայլ Ատենապետ
Ազգային Ժողովոյ .

Ազգային Ժողովն , իւր 1884 Յու-
լիս 6 ի նստին մէջ , Նախաձեռնութեան
Դիւանին յղած է Խառն Ժողովոյ յու-
նիս 20 թուակիր մի առաջարկն , ա-
ռաջնորդաց ընտրութիւնն առժամեայ
կերպով կեդրոնական Վարչութեան
յանձնելու մասին :

Կը յիշէ Ժողովը թէ արդէն փե-
տրվար 24 ին համաման առաջարկի
մը քննութիւնն յանձնուած էր Նախա-
ձեռնութեան նախորդ դիւանին , որոյ
մեծամասնութենէն կազմուած է ներ-
կայ դիւանս , և թէ նա մարտ 14 ին
մատուցած է իւր տեղեկագիրն , որ
ց'արդ կըզպասէ Ժողովոյ ինդրոց կար-
գին մէջ : Յիշեալ տեղեկագիրն մեր-
ժուռ կ'առաջարկէր սա պատճառա-
բանութեամբ .

« Այս առաջարկը կը հակառակի
Ազգային Սահմանադրութեան 97 րդ
յօդուածին , որ Գաւառական Ընդհա-
նուր Ժողովոց կը յանձնէ առաջնորդաց
ընտրութիւնն : Դիւանս օգտակար չը
կարծեր փոփոխել յիշեալ յօդուածն ,
որ ապակեդրոնացական ոգիէ ներշնչե-
ուած է և տեղացեաց իրաւունքը կը
յարգէ , մանաւանդ որ այսպիսի փոփո-
խութիւն մը կրնայ բողոք և ընդդիմու-
թիւն յարուցանել գաւառաց մէջ :
Վարչութիւնը կարող է լուծել առաջ-
նորդական կնճիռներն , համոզողական
միջոցներ ի դուրս դնելով Գաւառական
Ժողովոց քով , որպէսզի անգլուխ վիճա-
կաց համար առաջնորդ ընտրեն , իրենց
առաջնորդաց տեղափոխութեանն հաւա-

նին , եթէ բարձրագոյն պատճառաց հա-
մար անհրաժեշտ դատուի , և յաջորդ
նշանակեն իրենց այն առաջնորդաց որք
բարձրագոյն և անյազթեքի դժուարու-
թեանց պատահած լինին , Հետեապէս ,
կ'առաջարկենք մերժել ներկայացեալ
օրինակն ծրագիրն » ,

Այժմ կը խոստովանիմք թէ մեր
համոզումը նոյնը մնացած է , զի մարտ
14 էն 'ի վեր չ'է պատահած իրողութիւն
մը որ կարծեաց յեղաշրջում պատճա-
ռէր մեզ , մանաւանդ որ այդ առաջար-
կին դէմ մեր նախատեսած բողոքն և
ընդդիմութիւնն սկսած են յառնել Տը-
րապիղոնի Գաւառէն սկսեալ , որպէս կը
վկայեն յունիս 27 ի և յուլիս 3 ի Մ-ի-
ներուն մէջ հրատարակուած թղթակցու-
թիւններն և այն պաշտօնագիր որ ներ-
կայացաւ Ժողովոյ վերջին նստին , իսպա-
նի Ժողովոյ պաշտօնագրին թուած չարիք-
ներն համոզողական միջոցներով կրնան
բարձուիլ , առանց դիմելու բացառիկ
տնօրինութեանց , և անչուշտ լաւագոյն
է որ Վարչութիւնն , կիսադարմաններ ո-
րոնելու տեղ , փութացնէ առաջնորդա-
կան վիճակներն նոր կազմակերպութեամբ
սահմանելու պաշտօնով կարգեալ Յանձ-
նաժողովոյ գործն , որ , ինչպէս ինք կը
հաւատայ , հիմնական կարգադրութեան
մը խարխիւսը պիտի լինի :

Մնամբ յարգանք

Անդամք Նախաձեռնութեան Դիւանի
Ատենագիր Ատենապետ
Յ. Արշակունի Մ. Ձերբագ (Տեղեկագիր)
13 Յուլիս 1884
Կալաթա

(Թեք ընկերացման)

ՓՈՓՈԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական գիտութեան մը համար խօսք կուզեմ : — Երբ այս տեսակ պաշտօնագրեր կը ներկայանան ժողովոյս , կրնայ ըլլալ որ մի և նոյն նիւտին մէջ նկատողութեան չ'առնուին և մնան յաւրորդ նստին . բայց լաւագոյն է մի և նոյն նստին ատենագրութեան մէջ արձանագրել զսանոնք , որպէս զի երեւոյթութեան կարենան կանխու ուսումնասիրել այդ պաշտօնագրերն :

ԱՏՆԱՊՈՒՅՏ ԷՖ. — Արդարեւ խորհրդարանական սովորութիւն է որ այս տեսակ տեղեկագրեր , մասնաւոր տպագրութեամբ՝ նիւտին էրեք որ առաջ բաշխուին երեւոյթականաց , զոյս նախապէս կարենալ ուսումնասիրելու համար , և միապաբելի էր որ այդ սովորութիւնն մեր մէջ եւս մտտ գտներ , բայց զժբարդարար մեր պիւտոնէն առ այժմ չ'ենրեր մեզ այդ տեսակ տպագրական կրիկն ծախոց զոնք բանալ :

Չայս ասելով , Ատենապետ էֆէնտի կը հրահրէ զերեւոյթական խօսք առնուլ ներկայացեալ խնդրոյն վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ըստ ամենայնի համարիտ եմ Նախաձեռնութեան Դիւանի տեղեկագրին և ընդէմ վարչութեան առաջարկութեան :

Հարկ է գիտնալ թէ կեզր. վարչութիւնն մի միայն Առաջնորդական Տեղապահ կարգելու իրաւունք ունի և ոչ թէ Առաջնորդներ : Ասի գաւառացեաց զարաւոր մի իրաւունքն է :

Որ և է վիճակ ինքն որ կ'ընտրէ իւր առաջնորդն և եթէ պատճառաւ մը չ'կարենայ իւր այդ իրաւունքն 'ի գործ դնել , յայնժամ կեզր. վարչութիւնն իւր կողմանէ Տեղապահ մը կը նշանակէ նոյն վիճակին համար որ փոխանորդարար կը վարէ Առաջնորդական գործերն :

Առաջնորդութիւնն եւս գաւառացեաց թողած է իրենց Առաջնորդին ընտրութիւնն և մենք չունինք իրաւունք զրկել զանոնք իրենց այդ իրաւունքն : Եւ ինչպէս որ վարչութեան պարտքն է դրամ հայթայթել ազգային այլ և այլ պիտոյցից գոհացմանն համար , նոյնպէս իւր պարտքն է հսկել Առաջնորդութեան անկերի գործադրութեան 'ի գաւառս և յորդորել զնստ որ փոյթ տանին իրենց Առաջնորդի ընտրութեան :

ԵՒՄԵՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Շատ իրաւացի են Ղազարոսեան էֆէնտիի զիտողութիւններն . կը ձայնակցիմ իրեն :

ՓՈՓՈԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութեան յարուցած Առաջնորդական խնդիրն այն կարգի խնդիրներէն է , որ կրնայ զմեզ շատ հետաքննելու տանիլ և ընդարձակ վիճաբանութեանց տեղի տալ , ուստի լաւ կըլլայ եթէ կարճ կապուի այս խնդիրը :

Այս զիտաւորութեամբ չպիտի մտնեմ խնդրոյն խորը : Պէտք է զիտուալ թէ տարիներ յառաջ այս խնդիրն կեզրոնացում եւ ապակեզրոնացում անուանց ներքեւ յուզուած է աստ , եւ մնացած է իրաց վիճակն այնչպէս , ինչպէս որ էր յառաջ . վասն զի ոչ միայն Սահմանադրութիւնն հակառակ է այդպիսի կեզրոնացման մը , այլ և Եկեղեցական օրէնք չ'են ներքեր որ ժողովրդեան իրաւունք անտես առնուին : Բնական օրինոց եւս հակառակ է . քանզի այն ժողովուրդն որ իւր հովուին ծախք կը հոգայ , իրաւունք ունի անոր ընտրութիւնն ալ կատարել : Եթէ կեզր. վարչութիւնն պիտի ընտրէ զաւանի մը առաջնորդը . պէտք է ուրեմն որ ընտրեալ Առաջնորդին ծախքն ինք վճարէ : Երբ կեզրոնական վարչութիւնն յանձն առնու այդ ծախոց վճարումն , այն ատեն թերեւս գտնուին գաւառներ որ անոր զրկելիք Առաջնորդներն ընդունին . քանզի կան գաւառներ , որ իրենց ի-

բաւուրն այդ պիտի փոխարինուի թեմար մ'իսկ զտնել չեն գիշանիր :

Գեա քանի մ'օր յառաջ լրագրոց մէջ կարդայմք թէ Տիրապէքիրի Առաջնորդական Տեղապահ ընտրուէր է Կեդր. Վարչութեան կողմէ Տ. Կարապետ Վ. Յաղարտունի, եւ ասոր ճանապարհի ծախսոց համար Պատրիարքարանէն հետագրուէր է 'ի Տիրապէքիր, որ շեռագրով պատասխանէր է թէ 10 ոսկեոյ վճարման յանձնարարութիւն եղած է ասո վաճառականի մը : Յայտնի բան է թէ 10 ոսկեով կարելի չէ Պօլսէն մինչեւ 'ի Տիրապէքիր ճանապարհորդել . Պատրիարքարանէն երկրորդ անգամ այս մտօք հետագրուէր է 'ի Տիրապէքիր : Այս փորձէն կերելի թէ խօսքը դրամով զնորոզին քով է . եթէ Տիրապէքիր ուղէ յարգել Կեդր. Վարչութեան ընտրութիւնը կը մճարէ ճանապարհի ծախքը : Ընտրեալը տեղապահ մ'է, որ ըսել է առ ժամանակեայ պաշտօնատար մը եւ դաւառն այդ մասին մեծ բան մը 'կորնցնէր, մանաւանդ թէ, ինչպէս գրուենք, Տիրապէքիր շատոնց խնդրած էր Պօլսէն իրեն համար Առաջնորդական Տեղապահ մը :

Վարչութիւնը պէտք է համոզուի թէ, իւր քերած այս առաջարկութիւնն գաւառացւոց միճակը դարմանելու համար իրրեւ զեղ չի ծառայելէ զատ, ընդհակառակն նորանոր խնդրոց եւ զժողովրդեանց տեղի պիտի տայ . զի բողոքներն պիտի սկսին այն վայրս կեանէն, երբ Կեդրոնին միջամտութիւնն ըսկըսի : Արդէն Տրագիզոնի Գաւառական Ժողովն իւր ձայնը քարձրացուց . նոյնը պիտի ընեն այն գաւառք եւս, որք Առաջնորդական ընտրութեան խնդիր ունին, եթէ Կեդրոնը միջամտէ անոնց ընտրական իրաւանց : Ասկէ պիտի ծագին շփոթութիւնք, եւ Կեդրոնը տեսնուած ընդդիմութեանց համար պիտի պարտաւորի զիմեկ Բ. Գրան միջամտութեան : Հա՛րկ է այս տեսակ խնդրովք ձանձրացնել Կայս. Կառավարութիւնն, մինչ մենք

ու՛րիք այնպիսի խնդիրներ, որոնց համար հարկադրուել եմք միշտ բաղխել Նորա զԹութեան դուռը : Սակայն չմոռնանք յիշել թէ Պատրիարքարանը չլրացաւ 'ի Պօլիս քերել տալ եղեսեան Սրբազանը, թէ եւ հարիւր անգամէն աւելի նա կաշուեցաւ 'ի Պօլիս : Կեդրոնն որչափ դուրս ելնէ իւր իրաւաստութեան սահմանէն, եւ գաւառացւոց միջամտել ուզէ, այնքան առաւել կարօտ պիտի լինի Բ. Գրան . քանզի երբ իւր հրամաններն անգործադրելի մնան գաւառական Ազգային իրիտնութեանց քով, Կեդրոնը պիտի պարտաւորի զիմեկ Բ. Գրան միջամտութեան . եւ այսպէս մեր ազգային հայրական իշխանութիւնն տակաւ պիտի ցնդի, հօր եւ որդւոց մէջ զժողովուրդ տեւական պիտի ըլլայ : Ազգային ներքին Վարչութեան անկախ զիբքը պիտի խախտի եւ իսկ մը անտեղի խնդիրներով պիտի պարտաւորինք զբազլի, եւ զբաղեցնել նաեւ Կայս. Կառավարութիւնը, որ գաւառացւոց բողոքը լսելու եւ անոնց ու Կեդրոնին մէջ դատաւոր կանգնելու իրաւունքն 'ի գործ դրած պահուն, իրաւունք պիտի ունենայ նաեւ հրաւիրել ըզմեզ Սահմանադրութեան պահանջմանց համակերպելու . քանզի պէտք է զիտնալ թէ անանց Կայս. Կառավարութեան հաւանութեանն Սահմանադրական այդպիսի մեծ փոփոխութիւն մը որ բողոքոյ տեղի կրնայ տալ, կարելի չէ մեզ 'ի գործ դնել այժմէն :

Այսչափ ինչ հարեանցի ախնարկութիւն ընելով այն հետեւանաց վրայ, որբքնական են այն միջամտութեան, զոր կուզէ 'ի գործ դնել Վարչութիւնն, առանց ունենալու նիւթական զօրութիւն, եւ առանց իսկ ունենալու դրամական միջոցներ, որպէս զի գէթ անոնցմով կարենայ իւր միջամտութիւն ընդունելի ընել գաւառաց . կանցնիմ այժմ Վարչութեան յարուցած խնդրոյն վրայ իմ կարծիքս յայտնել թէ ինչ պէտք է ընել . . . :

Այդ խօսքերն աւելորդ են, Փափազեան էֆէնտի: Ան ըսէք մեզ թէ՛ ի՞նչպէս ընեմք նե՛՛ լաւ կ'ըլլայ:

ՓԱՓԱԶԵԱՆ Մ. ԷՖ. — (պատասխանելով)

Կամարական էֆէնտի, անցեալ նիստին մենք զձեզ մտիկ ըրինք, թէ՛ եւ խնդրէ դուրս խել մը խօսքեր ըրիք: Եպօք ես խօսք առած եմ, իրաւունքս է խօսիլ, եւ եթէ չէք ուզեր զիս լսել, կրնաք դուրս ելնել:

ՍԵՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ատենապետ է.

Ֆէնտի, հրաւիրեցէք Փափազեան էֆէնտին ես առնուլ իւր այդ վերջի խօսքը, զի մենք չոս եկած ենք զիրար յարդելու եւ ժողովըրդեան բարի օրինակ տալու համար, եւ ի՞նչ կը նշանակէ այդ եղանակաւ խօսիլ:

(Աղմուկ եւ շփոթութիւն)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (վերահաստատելով

բարեկարգութիւնն) երբ կամարական էֆէնտի, առանց իրաւունք ունենալու ընդմիջեց զՓափազեան էֆէնտի, շատ բնական էր որ այս վերջինն ալ ըսէր իրեն թէ. « եթէ չէք ուզեր մտիկ ընել, կրնաք դուրս ելնել »: Այս պատասխանին մէջ բնաւ նախատական իմաստ մը չը կար, մանաւանդ թէ՛ երեսփոխան մը խօսելէ արդելուլ ուզելն ներելի չէ, քանի որ Ատենաբանն խնդրէն չէզդիր եւ պատշտից օրինաց հակառակ չի շարժիր: Թողլով որ սոյն օրինակ պարագայի մէջ իսկ իրաւունքը Ատենապետինն է: Ուրեմն այս մասին Ազգաձեան էֆէնտիի կողմանէ եղած դիտողութիւնը եւս բոլորովն անտեղի են:

Շարունակեցէք, Փափազեան էֆէնտի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (շարունակելով)

Ինձ կը թուի թէ Վարչութիւնն այդ առաջարկը բերելու հարկադրեալ էր Կարնոյ Մշուի եւ Արաբիկի առաջնորդաց խնդրներէն:

Քանի մը տարիներէ ՚ի վեր այս առաջնորդական խնդիրքը ընդ մէջ Բ. Դրան եւ Աջ Պատրիարքարանի կը տարուբերին: Կերեւի թէ Վարչութիւնն Բ. Դոնէն յուսահատեալ, այդ թափուր վիճակաց դարման տանելու խորհրդով ընդհանուր ստաջնորդական վիճակաց մասին բացառիկ տնօրէնութեան մը արտօնութիւնը կը խնդրէ ժողովէս. մինչդեռ աւելի լաւ կ'ընէր, եթէ միմիայն այդ երեք առաջնորդական վիճակաց խնդիրը բերէր ժողովիս, եւ զմեզ ժամալաճառ չ'ընէր հիմնական սկզբունքաց խնդիրներով:

Կըմբռնեմ թէ սոսկալի մեղք է տարին ըրով առանց առաջնորդի թողուլ դաւառները, քանի որ մեկը երբ մի բանի ամիս առանց Պատրիարքի միանք, կ'սկսինք վնասները տեսնել եւ ձայն բարձրացնել: Ուստի քաղաքական պատճառներու համար Պօլիս եկող այդ առաջնորդաց համար Վարչութիւնն պարտական էր Բ. Դրան կառնող հասկնալ, եւ եթէ տեսնէր թէ անկարելի պիտի ըլլայ անոնց վերադարձն յիւրեանց վիճակն, նոյն առաջնորդաց ուրիշ վիճակներու մէջ պաշտօնակարելու մասին Բ. Դրան հաւանութիւնը պէտք էր խնդրել. ինչպէս որ եղաւ Փիլիսոս Եպիսկոպոսին համար, զոր Վարչութիւնն չկրցաւ զրկել ՚ի Տիրապէքիր, Բ. Դրան այդ մասին հաւանութիւն չունենալուն համար, սակայն կրցաւ զրկել ՚ի Պաղատա: Իսկ եթէ Բ. Դրան այդ Առաջնորդաց չենէր որ եւ է վիճակի մէջ պաշտօնավարել, այն ատեն այդ Առաջնորդաց անձնաւթս արդարացուցման խնդիրն երեւան կ'եյնէ, զոր Վարչութիւնն առանձին խնդրոյ նիւթ պարտի ընել, սակայն նոյն թափուր վիճակաց եւս հրահանգ տալ, որ փութան Առաջնորդական նոր ընտրութիւն կատարել:

Սակայն պէտք է խոստովանել թէ, միայն այդ երեք վիճակները չեն որ թափուր մենացած են: Ուրիշ վիճակներ ալ կան, որ տարիներէ ՚ի վեր վտորդապետ կը խնդրեն, եւ կեղծ Վարչութիւնը անոնց խնդիրը կատար

րած չէ՝ այսպէս Տիրապէշերը, Բաղէշ և այլ վիճակը տարիներով թափուր մնացած են : Բայց ղէշ վանէն, Խրիմեան Արարածնէն Վարդապետ մը խնդրեց, և ստացաւ . և կարծեմ տակաւին Վարչութիւնը զայն չվտերայացուց : Աստ մեր առջեւ կենէ՛ Վարդապետաց, մանաւանդ առաջնորդական պաշտօն վարելու կարող Վարդապետաց նուագութեան խնդրոյն հետ, զանուամ Վարդապետաց և Եպիսկոպոսաց զաւտական Առաջնորդութեան պաշտօն վարելէ խոյս տալու խնդրը, և գաւառացեաց իրենց Առաջնորդն ասրեցնելու մասին հանած դժուարութեանց խնդրը : Այս խնդիրներն արդարեւ ծանրակշիւ են և Վարչութեան խորին ուշադրութեան արժանի, քանզի անոր գործելու կարողութիւնը կը խափանեն : Արդ, առ այժմ՝ առանց ատոնց վրայօր ընդարձակ տեսութիւններ ընելու, ես հետեւեալ առաջարկութեամբքս կը յուսամ ըստ կարելոյն դարմանել զանոնք, ընդ որս և Վարչութեան առաջարկը :

Կառավարկեմ .

1. Վարչութիւնը պարտական է հըրահանդ տալ Առաջնորդական վիճակաց որ չունին Առաջնորդ կամ որոց Առաջնորդներն անհնար պիտի ըլլայ զրկել արտաքոյ կարգի պատճառներով, ընտրել իրենց Առաջնորդները, որոշեալ պայմանաժամի մը մէջ, փակեալ ցանկի մը վրայ, որ Յէն մինչեւ Յ Եկեղեցական պիտի պարունակէ, ամենքն ալ յարմար, արժանաւոր Առաջնորդական պաշտաման

Եթէ վիճակ մը դիտողութիւն ունենայ ցանկին վրայ աւելնայիք անձի մը վրայ, Վարչութիւնը կը յաւելու զանի, եթէ բանաւոր արգելք մը չտեսներ :

Եթէ որոշեալ պայմանաժամուն մէջ վիճակ մը չգիւթայ կատարել իր

ընտրութիւնը, Վարչութիւնն կընարէ Առաջնորդը այն ցանկին մէջէն, որ հարգեալ է արդէն նոյն վիճակին, և սխալատուութեամբ կը վճարէ անոր ճանապարհի ծախքը և ֆերման յանձնելով կը զրկէ ՚ի նոյն վիճակ .

2. Այն ամէն Եկեղեցական, որ Վարչութեան նշանակեալ ցանկին մէջ կը գտնուի, և Առաջնորդական վիճակէ մը կընտրուի, պարտի ընդունիլ առաջարկեալ պաշտօնը, եթէ, չունի այնպիսի բանաւոր արգելք, որով կարենայ համոզել զՎարչութիւնը

Եթէ Եկեղեցական մը, Վարդապետ և Եպիսկոպոս, մերժէ ընտրութիւնը և չհնազանդի Վարչութեան վերջին հրամանին, կը զրկուի Կ Պօլոյ մէջ և այլուր Ազգային պաշտօն վարելէ

Եթէ Եպիսկոպոս որ է այդ ընտրեալը, կը զրկուի նաև Պատրիարքական ընտրելի լինելու հանգամանքէն :

3. Ընտրեալ Առաջնորդ մը իրաւունք ունի ստանալ իւր ֆերման և այլ յարակից ու ճանապարհորդութեան վերաբերեալ ծախքերը, և իւր ապրուստին բուականացող գումար իւր առաջնորդական վիճակէն

Վիճակին մէջ գտնուած բոլոր Ազգային Վանօրէից վերին հսկողութիւնն Առաջնորդին կը վերաբերի, ուստի իրաւունք ունի նոյն Վանքերէն բաժին առնուլ պտղիի և այլ արդիւնքներէն .

Առաջնորդ մը ոչ թէ դրամ դիզելու, այլ իւր պաշտօնին վտայելուչ կերպով ապրելու իրաւունքն ունի. երբ վիճակ մը այդ չստիպար ապրուստը զանայ, Կեդրոնին պարտքն է ամեն կարելի միջոց ՚ի գործ դնել Առաջնորդին օգնելու այս մասին :

(Փոսիպետան Ս. Էփեմեոսի յետոյ գրաւոր մատոց սոցն առաջարկը Կիւսնին) :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — (ԲԵՆՈՒ ԷԼԻՔԻՈՒ) Երեսօտխան Տեառք. թէ և Վարչութեան անդամ, ըստ չ'ունիմ իրաւունք խօսել այս բեմէն յ'անուն Վարչութեան: Երբ որ անդիրն կը յուզուեր Խառն-ժողովոյ մէջ, ևս իսկ համոզմամբ հոմատիտ չ'էի անոր, զի հակառակ կը գտնէի զայն այն ծրագիրն որ Պատիվ ժողովոյ մօտ ժամանակներս քուէարկեց, Պարտէնիտի բնութեան տաթիւ, և որով ընտրութեան իրաւունքը ըստարձակապէս ժողովուրդին կը վերադարձէր:

Երեսօտխաններէ ոմանք ներկայ առաջարկի մեքման իբրևս վրասա՝ Սոհմանաղբութիւնն բերին, այլ տուաւ ևս պէտք է յիշել մեր և կեդեցական դարաւոր օրէնքներն որք անժքնատեղի կերպիս ժողովուրդին տուած են ընտրողական իրաւունքը:

Բայց սխալ են այն ենթադրութիւնք և անխարկութիւնք որոյմով ցայ տալ կուզեն թէ Վարչութիւնն այս խնդիրը բերելով, կուզէ կեդրոնացնել իշխանութիւնը և ժամանակ անցնել: Հարկ է զիտնալ թէ Վարչութիւնը այս առաջարկն բերած է մի միայն այն ցըրուեալ վիճակաց համար, ինչպէս Խիզան, Գերջան և այլն, որք առաջնորդ անունով վարդապետ մը կը զրկեն զիրենք հովուելու, և այդ տեղեր վարդապետ մը զրկել՝ տուալնորդական ընտրութիւն կատարել չ'նշանակէր: Կան տեղեր տլ որք քնաւ առաջնորդ չ'են ուղեր, ինչպէս Պալքէթեր, որ Կ. Պօլսէն քանի մը ժամ հեռաւորութիւն ունի. 6 ամիս է հրահանգ զիրուած է: և յ'սից ընտրութիւն չ'իտատուիր և քահանայի մը ձեռօք կը կուտուարի: Գատուայիք ընդհանրապէս կը կարծեն թէ որովհետեւ առաջնորդը վարդապետ է, ծախք չունի. առի սխալ համոզում մ'է, վարչի զի ինչ որ է Պատրիարքն Կ. Պօլսոյ մէջ, նոյնը չէ առաջնորդը գաւառին մէջ, հոս չեն ներկայանար սպանութեան զէպրեր և այլ խնդիրներ որք ի գաւառս առաջնորդին կը վերաբերին: Առաջնորդը աթոռ ունի Վարչա-

կան ժողովին մէջ, և նա ոչ թէ իբր տնձնական սխտոյնց, այլ արտաքին յարաբերութեանց համար ծախուց կը կարօտի:

ԹԵԿՐԵԱՆ Ա. ԷՅ. — Շատ ճիշդ է:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Իսկ Գահանայից համար այնպէս չէ. զոր օրինակ Պալքէթեր այսօր քահանայով մը կը քաւախանանայ, ըստ պէտք է զիտնալ թէ նա խոտուանաչայք լինելով իբր ժողովուրդն ունի և անոր ծախուքն կ'ապրի և պարտաւորեալ է ըստ այնմ վարուել, ըստ վարդապետաց համար այնպէս չէ:

ԱՏՎԱՋԵԱՆ Տ. ԵՂԻՇԵ ՎՐԴՊ. — (Ընդ միջելով Առեկաբանն) Արդեօք քահանայք ևս Առաջնորդական իրաւունք չ'սխտի կրնան վայելել:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Վիճակի մը Առաջնորդութիւնն ըստ Հայաստանեաց Սեկեցեցոյ օրինաց, մի միայն Եպիսկոպոսին իրաւունքն է, և Վարդապետք երբ Եպիսկոպոսական ատիճանն կ'ընդունի Էջմիածնայ Սրբազան Հայրապետին, այն վիճակին վրայ կը ձեռնադրուին որոյ առաջնորդութեան կոչուած են:

ՁԱՏԵՐ — Այո, այդ է Եկեղեցոյ օրէնքն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — (Շարունակելով) Ըստեցու նաեւ թէ Վարչութեան այս առաջարկութեան բուն օրին է՝ ըսնի մը զլուսաւոր գաւառնայ առաջնորդական խնդրոյն լուծում տալ. այս ենթադրութիւնն ևս սխալ է, զի արդի Վարչութեան մէջ մեծ հոգածութիւն կայ առաջնորդական խնդրոյ մասին, որ ներկայացուած է նաեւ Գատուայն Նախարարութեան և Կոյսերական Կառավորութիւնն խոտուցած է կարգադրել զայն:

Թող չ'կործուի սակայն թէ յանուն Վար-
թեան կը խօսիմ. ես համարիտ եմ Փափագ-
եան էֆէնտիի առաջարկութեան որ արդէն
Խառն ժողովոյ մէջ ներկայացուցի, բայց բազմ
չունենցոյ ձայնս լսելի ընել տուլ, և ահա նոյնն
կը կրկնեմ յատենի Պատ. ժողովոյ յէ :

Գայով Փափագեան էֆէնտիի առաջար-
կութեան այն կէտին թէ՛ « անոնք որ չեն ու-
զեր երթալ, թող զրկուին ազգային պաշտօն-
ներէ և այլն » ես իբրև եկեղեցւոյ մի վարդա-
պետ՝ կը յայտարարեմ որ եթէ չ'երթամ,
զրկեցէք զիս վանք կամ այլ ուր որ ուզէք,
Բայց այսպիսի օրէնքներ սահմանելէ առաջ նախ
հոգայէք զանոնք. առանց անոր կարելի չի
պիտի լինի բարեկարգել առաջնորդական խըն-
դիրն :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Բեմն էլնելով)

Իզմիրեան Սրբազան բաւական լաւ բացատրեց
խնդիրն, յայտնելով թէ ինքն ևս համակար-
ծիք չէ գտնուած Վարչութեան այդ առաջար-
կութեան, այլ դժբաղդարար իւր մասնաւոր
կարծիքն չուզեց յայտնել և թողուց ի
միջան :

Ես ալ բննած և ուսումնասիրած եմ այդ
առաջնորդական խնդիրն և անոր առ կախ մը-
նալուն պատճառները իւր մէջ որոնելով տե-
սած եմ թէ մեր առաջնորդական վիճակաց
անբարեկարգութեան գլխաւոր և բուն պատ-
ճառն եղած է 1878 թուականէն սկսեալ երի-
տասարը և անիորձ վարդապետաց առաջնոր-
դական պաշտօններու կոչուելն, որք իրենց
բրտին և մտաց ուղղութեամբ միայն ուղած են
առաջնորդել զգաւառս . . . :

ՋԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Զգօ-
նութիւնը տարբիի Հետ դորձ չունի : Ֆրնուզի
Վանահայրը և Տիարալէքիի Առաջնորդը երի-
տտարը չ'էին, ճերմակ մազ, ճերմակ մորուք
ունէին :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով)
Կրտնի թէ նարս միմիայն իրենց արտին և մը-
տաց ուղղութեամբ ուղած են առաջնորդել
գաւառներն, և չեն մտածեր ծառայել Եկե-
ղեցւոյն և ժողովրդեան իրական շահոց, այլ
գործած են 'ի շահս անձին : Անոնք՝ վարդա-
պետներ, որք երթալով 'ի գաւառս, ուղած են
ստիբիլիզութիւնն ժողովրդեան գլխուն վրայ ու-
սանիլ : Վարդապետներ, որք իրենց անճանի
ընթացքովն կտակած խկ հրախրած են իրենց
վրայ . . . :

(Սոյն պահուն Եկեղեցական երեսփոխա-
նաց կողմէն բողոքոյ և արանջանաց ձայներ կը
լսուին) :

**ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով զԱտե-
նաբանն)** Կը հրախրեմ Ատենարան էֆէն-
տին որ խորհրդարանական լեզուաւ յայտնէ
իւր կարծիքն և զդուչանայ անձնակառութիւն-
ներ վիրաւորել :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով)
Ես չ'տեսայ Վարդապետ մը որ ըսէ թէ՛ զիս
ուր որ զրկէք, պատրաստ եմ երթալ. այլ
կը մտածեն թէ՛ ո՞ր գաւառին մէջ կրնան
պարարտացնել իրենց անձը . . . :

**Տ. ՄԻՆԱՍԵԱՆ Վ. ՎՐԻ. — Երեւակա-
յական և անտի խօսքեր :**

**ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ո՛չ, իրողութիւն-
ներ են ասոնք :**

**ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — Վերտին կը հրախ-
րեմ Ատենարան էֆէնտին որ հոճի՛ պատուած
լեզուաւ խօսիլ, եթէ չ'ուզեր որ օրինաց խըն-
տութեան դիմեմ :**

**ԻՋՄԻՐԷԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Սուրէն-
եան էֆէնտիի ըրած դիտողութիւնքն խնդրէն**

դուրս խօսքեր են : Եթէ այսօր պիտի դրա-
դուք լուծել ընդհանուր Եկեղեցականութեան
խնդիրն , եւ ալ ունիմ իրեն տալիք պատաս-
խաններ :

Կարծեմ թէ բաւ է ալ՝ ա՛յս անտիճան
յարձակում՝ ընել Եկեղեցականութեան վրայ
այս ժողովոյս մէջ : Անձնօրութիւն պահան-
ջել եկեղեցականներէն , չ'նշանակեր թէ՛ նո-
քս անօթի մնալու եւ 20 օրուան ճանապարհ
ոտրով երթալու են : Կարծեմ դուք ալ այդ
աստիճան անձնօրութիւն եւ զոչտրութիւն
չ'ը կրնար պահանջել անոնցմէ :

ՍԵՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ կը փոփա-
րիմ որ այս խնդիրը աւելի ընդարձակուի , եւ
ոչ թէ ամբողջի վարչութեան առաջարկին
վրայ : Ես թերեւս ամենէն աւելի կծու քննա-
դատողներէն մին եղած եմ Եկեղեցականաց
նկատմամբ , բայց կզգամ նաեւ որ ցաւալի է
անոնց վիճակը եւ արժանի լուրջ ուշադրութեան :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրօտիբմ Սու-
րէնեան էֆէնտին շորունակել իւր ատենա-
բանութիւնն , բայց խնդրոյ նիւթ եղած կէտին
վրայ միայն խօսելով :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ես կատար-
ւապէս խնդրոյն մէջն եմ , Ատենապետ էֆէնտի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ
խնդրոյն տէրը վարչութիւնն է , որ կը յայ-
տարարէ թէ՛ Ձեր յարուցածն տարրեր խնդիր
մէ՛ , որ կրնայ նկատողութեան առնուլ ժո-
ղովն ուրիշ նստի մը մէջ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Խնդիրն պարա-
զայնքէ՛ ծագումն առած է , եւ ես ինքզինքս
պարտաւորեալ չեմ զգար Դիւանին կողմէ ինձ
տրուած մօտիկն համաձայն խօսիլ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենապետն ինք՛ չը

կրնար զգալ խնդրէն շեղած լինելն , այլ Ժո-
ղովն է որ կը տեսնէ՛ եւ իւր կողմանէ Ատե-
նապետն ուղղութիւն կուտայ մէն մի Ատենա-
բանի խօսքին :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Պէտք է որ մեր
Եկեղեցականք փորձառութիւն եւ երկրին օ-
րինաց հմտութիւն ունենան : Բայց զժբադրա-
բար մեր Եկեղեցականք զուրկ են ասոնցմէ... :

ՔՆՎԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց
ոչ ընդհանրապէս :

(Վերստին աղմուկ եւ շփոթութիւնք)

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Աղմկին մեջ
շարունակելով) Ես պիտի խօսիմ առաջնորդե-
լու կողմէ վարդապետաց ունեցած անկարո-
ղութեան եւ անհմտութեան վրայ : — Պիտի
թ թ մտքը որ խօսիմ , թէ չէ , թողում բեմը
եւ լռեմ :

ՁԱՅՆԵՐ — Խօսեցէ՛ք :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Այո՛ , իմեր կղե-
բականները իրենց անփորձութեամբն ժողո-
վրդեան պիտոյից գոհացում տալու անկարող
վիճակի մէջ կը գտնուին : Նոքա երբ վարդա-
պետութեան աստիճանին կը հասնին , կ'սխիւն
լրագրաց մէջ մի քանի փայլուն յօդուածներ
տալ եւ խեղճ դաւառացիք կարծելով թէ՛
ըստ ամենայնի իրենց կոչման արժանի եկե-
ղեցականներ են նոքա , եւ կարող զիրենք կա-
ռավարելու , կը փութեան անմիջապէս իրենց
վիճակին Առաջնորդ ընտրել զնոսն , որք երբ
պաշտօնի գլուխ կանցնին , վարչային գործոց
մասին իրենց ունեցած անհմտութեամբն եւ
անփորձութեամբը առաւել եւս կ'ատիարա-
ցնեն գործոց վիճակն՝ փոխանակ բարեխաւերու :

Այս պարագայիս մէջ անշուշտ կեզր-
վարչութիւնն ՚ի հարկէ ստիպեալ պիտի պար-

տաւարի այդ անկարող երբասարդ առաջ- նորդներն հրաժարեցնելու, ապագայ չարեաց առաջնն առնելու համար :

Աւտի եւ իրր երեսփոխան, այս տե- առթեամբ՝ Առաջնորդաց ընտրութիւնն գա- ւառին թողուլ լիտնդաւոր կը գտնեմ, նոյն իսկ ՚ի շահ գաւառացուց :

ՅԵՐԱՍՏ Մ. ԷՅ. — Եթէ երբտասարդ Ա- րաջնորդները չ'առնին կարեւորութիւն, Առ- րէնեան էֆէնտի թող ի՛նչ թէ ինքն ալ երի- տասարդ երեսփոխան մ'է :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Երեսփոխան Տեարք . Ժողովոյ փակման փամն մտեցած է, եւ տա- կաւին կան կարգ մը երեսփոխաններ որք խօսք օւղած են, եւ կարծէ ալ որ խօսին, զի խըն- դիրն տակաւին խակ է : Աւտի հարկ կըԱյ վիճարանութեան շարունակութիւնը թողուլ յաջորդ նիստին :

Տ. Խ. ԱՐԲԵՊՍ. ՆԱՐ—ՊԷՏ — Ատենապետ Էֆէնտի, կարելի՞ է արդեօք ինձ խօսք տալէ վերջ փակել զատեանն :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովդ կուզե՞ լսել Կրօնական Ժողովոյ Ատենապետ Սրբազանն, եւ ապա փակել ատեանն, քանի որ տասն վայրկեանի շար տակաւին ժամանակ ունինք :

ԱՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՅ. — Կ'ուզեմք լսել Ա- տենաբան Սրբազանն, փասնդ կրնայ ըլլալ որ իւր բանիքներն խնդրոյն լուծու մը աւելի զիւ- րացնեն :

(Երեսփոխան յ'ամենուտ ձայնակցելով Արդունեան Կարտակոմ Էֆէնտի, Ատենապետ Էֆէնտի կը հրաւիրէ զՏեար Խորեն Սրբազան բե՛նն ելնել եւ խօսք առնուլ) :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊՍ. ՆԱՐ—ՊԷՏ — Ատե- ցալետ Կրօնական Ժողովոյ (բե՛նն ելնելով)

Տեարք Երեսփոխանք .

Թէեւ յանուն Վարչութեան կողմա՞ծեղ խօսիլ, ստիպյն կարեւոր կը համարիմ ծա- նուցանել ՚ի սկզբան սատ թէ Առաջնորդական տոսջարիութիւնը Վարչական սեղանին վրայ եկած եւ մեծամասնութեամբ որոշում ստացած օրն՝ Խառն Ժողովոյ նիստէն բացակայ կը գըտ- նուէր, տկարութեան պատճառաւ, Կրօնական Ժողովոյ Ատենապետն, որ կատարելապէս հա- մակարծիք չէր եղեալ առաջարկութեան :

Սակայն իրրեւ Սահմանադրական Ժողովոյ Ատենապետ պարտուոր էր նա իւր ստորադը- րութիւնը դնել, եւ դրաւ իսկ այն տեղեկա- գրին ներքեւ որ Վարչութեան կողմանէ կու- գոր ներկայացնել Պատկառելի Ժողովոյը Վար- չական առաջարկին Ուրե՛նն ներեցէք որ նախ եւտուաջ Վարչութեան միտքը լացտորեմ ա- ռաջնորդական խնդիրն Պե՛զ : ներկայացնելու մասին, որպէս զի կարենայ ըստ այնմ՝ ըմբը- նալի Վարչութեան միտքն եւ քանտոր որոշ- ման մը յանգիլ :

Տ. Վ. ՎՐԿ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — (Ընդ- միջմամբ) Կարծեմ՝ Սրբազան չայրն չէ կա- րող խօսիլ չ'անուն Վարչութեան :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ի՛նչ ըսել է թէ յ'ա- նուն Վարչութեան չէ կարող խօսիլ Կրօնական Ժողովոյ Ատենապետ Սրբազանն : Մի՛թէ Վա- հան Վարչապետ նոր օրն՝ կուզէ ստեղծել : (Առ Ատենաբարան) Խնդրեմ շարունակեցէք :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊՍ. ՆԱՐ—ՊԷՏ — (Շա- րունակելով) Կրօնական Պատկառելի Ժողովն որոշած է պաշտօնապէս որ իւր կողմանէ ի- րաւունք ունենայ խօսիլ իւր Ատենապետան մի- այն, յատկեա՛ն Աղղային Ժողովոյը : Արաւ օւ- րե՛նն ոչ միայն իմ իրաւունք՝ այլ եւ պարտքն է խօսիլ անտանոր յանուն Վարչութեան ՚ի

պարզումն առաջարկեալ խնդրոյն, երբ մտնանա՞նք՝ բացակայ կը գտնուի այսօր դժբախտ դարձրար քաղաքական Ժողովոյ Առաջնագետը, իմա Ասեմեօսկոյ պաշտօնակիրն ՚ի Վարչութեան: Մինչև ցարդ խոտը ստեղծարարն Կիւղեցւոյ օրհնքն և սահմանադրութեան արամադրութիւնքն յիշեցնել բարեհաճեցան Վարչութեան: Պատիւ ունիմ և ես յիշեցնել նոցա՝ թէ Ազգային Ժողովն ընտրեալ Կրօնական և Քաղաքական Ժողովներն Եկեղեցւոյ և Սահմանադրութեան տարրական սկզբունքներն անգիտանալու չտիրուէ՞ն: Արդէն Վարչութեան անդամք խողովոց սոյն և այլ ազգին պաշտօններ վարած են և գրեթէ ամենքն ալ ընտրուողք են Ազգէն իրեն Երեսօրհանն: Նոքա անտարապետներն արայոյցներն տուած են ցարդ թէ նոցա քաջածանօթ են ազգային Եկեղեցւոյ օրհնքներն և Սահմանադրութեան արամադրութիւնքն: Արդէն երբ Վարչութիւնը Առաջնորդական սոյն խնդրը ձեռք կը ներկայացնէ՝ այն պատճառաւ է որ ինք լաւ գիտէ որ օրհնքէն չեղում մը կատարուի՞, բացառիկ պարագայ մէջ՝ բացառիկ արտօնութեամբ: չեղում որոյ ինքն Վարչութիւնը ձեռնհաս չ'իկնելով, կը հանէ յայն ստեան որ միայն ձեռնհաս է օրհնքներն յօրինելու, դադարեցնելու և ջրն ջնջելու: Արդ որո՞նք են այն բացառիկ պարագայք այն Առաջնորդական առաջարկեալ խնդրոյն մէջ և Առաջին, բանի մը ծանուցեալ վիճակներու քառամեայ կնճիտն, որով նոյն վիճակք իրենց առաջնորդներէն զուրկ կը զըտնուին, նոցա բացարձակապէս ակամայ բացառուութեամբ:

Զայդ բաժ զիտ Ժողովը խնդրոյն բոլոր հոնգամանօր՝ զոր անձա՞հ է յիշեցնել ստատար: Բացառիկ անօրինութիւն մը խնդրելու երկրորդ պատճառը սոյն է որ կան տակաւին գաւառներ յորս Սահմանադրութիւնն չէ գործադրուած, անգրական հոնգամանաց արտօնանքով և Կան սրբիլ գաւառներ ալ որ իրենց իրաւունց չեն

ուզեր տէր լինիլ, և հակառակ Վարչութեան օտարմանց և հրամանաց՝ կը դանդաղին ընտրել իրենց Առաջնորդը, կամ մտադի պատճառաւորներ մէջ բերելով, և կամ բնաւ իսկ լուրջ կը պահելով Վարչութեան հրամանաց ստիճակ: Այս երկու արարագոյնց մէջ եւս՝ Արդէն է որ կը տուէ, երբ կամ արտարին պատճառներով, կամ ներքին թուլութեամբ վիճակայնոց՝ թեմերն կը մնան անտառնորդ, որով ընտրանալօքն՝ և անխնամ: Այս վիճակները բացառիկ կերպիւ սոյն անխնամ կացութեանը բացառիկ դարմանի մը կարօտ տեսած է Ձեր Վարչութիւնը: Նա արտակամ է և կը փախաբի անխախտ պահել սկզբունքը, սակայն կուղչ հաշտեցնել անոր հետ գաւառաց մէջ տեղի ունեցած այս անհասկաց և վնասաբեր կացութիւնք:

Սակայն Վարչութիւնն իբր այդ առաջարկըն որոշած օրն՝ այս օրուան թուականէն աւանդներով առաջ է, թիչ ժամանակի մէջ, դրեթէ մայրաքաղաքի մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ, երբ զատական նախարարութեան գլուխն անցաւ Վսեմ՝ Հասան Ֆէ՛հմի փառայն, այն լուսավախ Նախարարն իբր արդարապէր կորովամտութեամբը սեսաւ ազգին իրաւունքներն, Առաջնորդական մի քանի թախտը մը նայած վիճակաց խնդրոյն մէջ: Որքան եմ յարտարարելու այսօր Ժողովոյդ՝ որ այս քառամեայ Առաջնորդական կնճիտն ոչ իտի դանկ իբր օրինաւոր և գոհացուցիչ կարգադրութիւնը խիստ մտ օրերու մէջ: — Որեմն այսօր հաճութեամբ արգէն լուծուած կը տեսնէ իբր առաջարկութեան առաջին բացառիկ պատճառը, ուստի սոյն ձեռնօթ վիճակներուն նկատմամբ այսօր բացառիկ տնօրինութեան հարկ չը տեսնար, արդարութեան Վսեմ՝ Նախարարին ուղղուած տուրթեան և իտտմանցն ընդ հուպ կատարմանն մրայ լրացոյց:

Գտնով երկրորդ բացառիկ պատճառին՝ Վարչութիւնը բաւական կը համարի Փափազեան Ստեփանն և Ֆէ՛հմիի առաջարկութեան առաջին մասը, որ գարծեալ բացառիկ տը:

ճորքնուրից մի է եկեղեցւոյ եւ Սահմանադրութեան օրինացն : Վարչութիւնը կը նշուի որ այն դատար որ կը ծուրանան կամ չեն կամենար իրենց առաջնորդն ընտրել , այսինքն իրենց իրաւունքն զործադրել յայտմ մասին , Վարչութիւնը պայմանաւորում զինքն , յորպէս լըրտանալն ինքն իսկ ընտրէ այն վիճակին ստանջնարը :

Սոկոյն կը յայտարարեմ յսնուն Վարչութեան , թէ ոչ մի տեսակ բացառիկ արեւորէութեան առարկայ չի համարիր այն հայաւնակ եւ պարտաճանանջ վիճակներ , որք Սահմանադրական Ժողովներ ունին եւ տրամադրուեն եւ եղած են միշտ Առաջնորդական ընտրութիւններն կատարելով օրինաւորապէս , ի գործ կը դնեն զիւրեանց իրաւուն զորս անբռնաբարելի կը ճանչնայ Ազգային կեդրոնական Վարչութիւնն : — Եթէ համէք յուշարիւել ներկայացնալ բարեփոխութիւնը , Վարչութիւնը գոհ պիտի լինի եւ աղջն պիտի տեսնէ որ առաջնորդներէ թափար մնացած վիճակներն հետզհետէ ստանան իրենց հովիւներն , եւ զաւտաց մէջ նոր մղուցն տրուի սզգային կենսական խնդրոց :

Վարչական այն առաջարկին առիթով կը ցուցիմ որ ատենաբանից ոմանք պատեհ հասարեցան Եկեղեցականաց վրայ յարձակողական բաժանման վիճակներու : — Նայն իսկ Սրճաճարիս մէջ հարուածել մտնաւոր թէ դատապետել նորա պաշտօնականն սնխանց կերպիւ , ո՛չ բաջութիւն է , ոչ տրգարութիւն : — Վարչութիւնը առաջնորդական խնդիր մը բերելով յատեան Ժողովոյց , եւ ոչ մի գանգատ յայտնած էր կամ միտք ունէր յայտնելու Եկեղեցականաց վրայ : Առիթէն չարաչար օգուտ բազըն՝ միթէ բարտեհ է զԵկեղեցականս , անգութ յարձակմամբ : Եթէ Եկեղեցականք ոմանք ստգամուց արժանի համարուին , ո՛վ իրուունք ունի մտողջ Եկեղեցականաց դասն դատապետել : Ի՞նչ է այն ճոռմարանութեանց նպատակը , միթէ սպայա՞ր կուզուի հանել ընդ մէջ Եկեղեցականաց եւ աշխարհա-

կանաց , կուզեմ ըսել՝ ընդ մէջ հարց եւ որդւոց :

(Բանի մը նստարաններ ընդվիշումներ)

S. Խ. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ — (Առ ընդմիջողս) Ի զուր իմ խօսքերն կուզէք ընդմիջել : Ձեր ձայներն եւ աղաղակք կրնան ընդհատել ատենաբանին խօսքն եւ վրդովել իւր ճառին տպաւորութիւնը : Սակայն չեր կարող բնաւ վրդովել իրաւունքն եւ արդարացուցանել անպատեհ ընթացք մը : (Շարունակելով) Մի կարճէք , Տերորք Երեւոյսեանք թէ Վարչութիւնը չզգար թէ Եկեղեցականութեան վիճակին դարման մը կարեւոր է : Անկեալ է կըսեն Եկեղեցականութիւնը , սակայն պէտք է քննել թէ ինչո՞ւ է անկեալ : Փոխանակ ընդունայն բացառանջութիւններու , հարկ է խնձրկլրել ըւրջ նկատողութեան առնուլ : Այն ատեն միայն պիտի տեսնուի թէ այն ցաւալի անկման մէջ ո՞րչափ մասն ունի Եկեղեցականութիւնը , եւ ո՞րչափ մասն՝ աշխարհականութիւնը : — Եկեղեցականութեան ոյժ տալ , Եկեղեցականութիւնը վերականգնել , այս է Վարչութեան յառաջը , վասն զի Արեւելի մէջ՝ ազգի մը վերականգնումը՝ Եկեղեցականութեան վերականգնման զուղընթաց է : Վերօճական Ժողովն պիտի բերէ Ձեզ ժամանակին զինդիր վիճակի Եկեղեցականութեան զոր արդ իւր հոգածութեան մասնաւոր առարկայն ըրած է : Այն ատեն թող ատենաբանք լընուրէն մտածեն եւ խօսին այն կարեւոր խնդրոյն վրայ , զոր կը համարիմ կենսական խնդիր վասն Ազգիս : Արարել կը լինիմ որ այստրուէ իսկ եթէ Ժողովը համի , անցնի յՕրտարագն խնդիր բարօրման վիճակի Եկեղեցականութեան :

ՁԱՅՆԵՐ — Այո , այո :

S. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ — (Շարունակելով) Արդ յակելով դայն միջադէպ

կը վերադառնամ յիշեցնել, Տեաքք Երեօփոսանք, թէ բաւական իսկ հասկըցանք թէ Վարչութիւնը ինչ բացատիկ պարագայից առջեւ էր երբ Ձեզմէ բացատիկ անօրէնութիւն մը խնդրեց, գլխաւորապէս նպատակ ունենալով այն երեք ստաճնորդութիւններն որոց հովիտ բացատիկ կերպով հետազուած էին իրենց ամբողջութիւնը և յորաց վերադարձուան հետզհետէ եկած վարչութեան, Ս. Պատրիարք հօր հետ՝ չէին խնայած և ոչ մի աշխատութիւն : Արդ քանի որ այդ կնճառտ խնդիր լուծման վրայ է վերջապէս արգարութեան նորընտիր Նախարարին իրաւասութեամբն և շնորհիւ վեհաժողովուրդի և առատագուր ինքնակալին, Վարչութիւնը հարկ չի տեսնար սլլ եւս բացատիկ անօրէնութիւն մը այն վիճակներու մասին : Կրնգուրի գրաբեփոխութիւն խրոսմն առաջարկութեան, այն մասնաւոր մի քանի գաւառաց նկատմամբ որոց վրայ խօսուեցաւ : Իսկ Վասայ Տրապիզօնի և նմանօրինակ գաւառաց համար, ուր Ստճմանադրական Ժողովներ կան, Վարչութիւնը երբէք մտաբերած չէ Աղբային Ժողովը արտօնութիւն տանուլ նոցա առաջնորդներն ինքն ընտրելու համար, Վարչութիւնը գօհոթութեամբ կը տեսնէ որ այն հոյարնակ վիճակը իրենց Ստճմանադրական իրաւունքն կը ճանաչեն, և գործադրել կը փոփոխին : Տրապիզօն մի է 'ի սոյն գաւառաց որ իւր նախաձեռնողութիւնը մինչեւ 'ի բողոք հասոցց, ընդգէմ՝ Վարչութեան, բայց յանիրտի, զի Աղբային կեդր. Վարչութիւնն տեղի տուած չէր բնու տարապարտ բողոքանաց. և 'ի պատրաստի էր և է յղել առ գաւառական Վարչութիւն Տրապիզօնի հրօհանգ և ցուցակ ընտրելոց յառաջնորդութիւն այն պատուական վիճակին :

ՍԵՎԱՃԵԱՆ Կ. ԷՏ. — (Առ Ատեմաբանն) Յոյտարարեցէք Արքազան Հայր, թէ Կարնոյ, Մշոյ և սլլ վիճակաց մասին եւս չէ եկած այդ առաջարկն :

Տ. ԻՌԲԷՆ ԱՐԲԵՊԻՍԿ ՆԱՐՊԷՏ — (Պատասխանելով) Բացարձակ կերպիւ կը յայտարարեմ յանուն Վարչութեան թէ նա չի պիտի միջամտէ ոչ Կարնոյ, ոչ Մշոյ, ոչ Վասայ գաւառաց ընտրողական գործոց : Կարող էք վատահիլ Ձեր Վարչութեան վրայ : Ձեզ կը մնայ զիւրացնել նորա գործը որպէս զի յաջողի առաջնորդական ընտրութեանց գործը կարգադրել և թտիւր մնայած ամբողջներն սղաատել ներկայ ոնխնամ վիճակէն, յորմէ կօզտի օտարն և թխճալին, և յորմէ մեծապէս կ'ընտանի Հայրութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՏ. — Կը տեղեկք արեմն որ Վարչութիւնն կը համաձայնի Փափագեան էֆէնտիլի առաջարկութեան սղապին մասին : Եթէ Նախաձեռնութեան Դիւանն ալ Համաձայնի, յայնժամ կը փակուի խնդիրն :

ԶԵՐԱԶ Մ. ԷՏ. — (Ատեմապետ Նախաձեռնութեան Դիւանի) Երբ բարեփոխում մը կ'առաջարկուի, պէտք է որ զրով չհաղորդուի այն Նախաձեռնութեան Դիւանիս, որպէս զի կարենամք ուսումնասիրել եւ կարծիք յայտնել : Վասն զի ես իբրեւ նոյն Դիւանի մի անդամը, չեմ կարող առ ոյժով կարծիք յայտնել առանց խորհրդակցելու պաշտօնակցացս հետ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Եթէ խընդրոյ մը վրայ եղած մէն մի առաջարկութիւն հարկ ըլլայ Նախաձեռնութեան Դիւանին յղել եւ անոր կարծիքն առնուլ, յայնժամ խնդիրն չկրնար իւր վերջնական լուծումը գտնել : Ուստի ես խնդիրն վերստին Նախաձեռնութեան Դիւանին յղելու հարկ չեմ տեսներ :

ԱՏԵՊԵՏ ԷՏ. — Ժողովոյս փակման ժամն անցած է, ուստի խնդրոյն շարունակութիւնն կը մնայ յաջորդ նստին :

Գ. Քացակայութիւն

Երեսփոխաններէն՝

Գարրիէլ	էֆէնտի	Նորատունկեան
Գասպար	»	Զերազ
Գրիգոր	»	Պէրպէրեան
Խորէն	Քնյ.	Փէհլիվանեան
Մելքոն	էֆէնտի	Պարոնիկեան
Միքայէլ	»	Մամիկոնեան
Ռուբէն	»	Կիւմիւղէրտան
Ռուբէն	»	Պուկոբեան
Սիմոն	Պէյ	Մաքսուտեան

Ժողովոյ այսօրեայ նիստէն երրորդ բացակա յաւթիւն ունեցած լինելով, կ'որոշուի յաջորդ նստին ըստ օրինի կոչնագիր յղել անոնց :

Նոյնպէս Երեսփոխաններէն՝

Մաթէոս	էֆէնտի	Ալիքսանեան
Գէորգ	»	Ապտուլլահ
Բարթող	»	Քիւրքճիպաշեան

Ժողովոյ այսօրեայ նիստէն չորրորդ բացակա յաւթիւն ունեցած էին, բայց նախորդ նստէն կոչնագիր գաղած չ'լինելով, կ'որոշուի այս անգամ իրր երրորդ բացակայք՝ հրաւիրագիր յղել անոնց] հանդերձ կոչնագրով :

Ատեանն կը վերնայ ժամը 5 1/2 ին, յաջորդ նիստն 15 օրէն գումարելու որոշմամբ :

Ատենադպիր Ատենապետ

Յ. ԱՐՔԱԿՈՒՆԻ Տ. ԵՆՈՍՈՒՑԵԱՆ

Երեսփոխաններէն յաւթիւն ունեցած լինելով, կ'որոշուի յաջորդ նստին ըստ օրինի կոչնագիր յղել անոնց :

Նոյնպէս Երեսփոխաններէն յաւթիւն ունեցած էին, բայց նախորդ նստէն կոչնագիր գաղած չ'լինելով, կ'որոշուի այս անգամ իրր երրորդ բացակայք՝ հրաւիրագիր յղել անոնց] հանդերձ կոչնագրով :

Ատենան կը վերնայ ժամը 5 1/2 ին, յաջորդ նիստն 15 օրէն գումարելու որոշմամբ :

Ատենադպիր Ատենապետ

Յ. ԱՐՔԱԿՈՒՆԻ Տ. ԵՆՈՍՈՒՑԵԱՆ

(Ստորագրութիւն) — Երեսփոխաններէն յաւթիւն ունեցած լինելով, կ'որոշուի յաջորդ նստին ըստ օրինի կոչնագիր յղել անոնց :

Ն Ի Ս Տ Թ.

17 ՕԳՈՍՏՈՍ 1884

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄՈՒԹՅԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՄՈՒԹՅԱՆ
ԵԵՆՆԵԱՆԵՐ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպօ. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի Բ
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Գահ. Սէթեան

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպօ. Դովորդեան
- 7 Յովհաննէս Գահ. Մկրտան Բ 2
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ 2

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափազեան Բ Պ
- 10 Խորէն Գահ. Փէչլիվանեան Բ 3
- 11 Ոսկի Գահ. Օհանեան
- 12

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ » Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Գահ. Տ. Սարգսեան
- 16

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Առքիաս Գահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանկեան Բ

- Պ Բացակայութիւն առաջին
- 2 » Երկրորդ
- Բ » բանաւոր պատճառաւ

ԵՅԵՐԵՄՅԵ
Ա. Վիճակ

- Գում-Գարու, Կետիկ-Փաշա-
Է. Գում-Գարուի ղուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ 3
- 22 Կարապետ Աղարդմաճեան
- 23 Բարթող Գիւրքեփաչեան Բ 4
- 24 Գէորդ Ապտուլահեան Բ 4
- 25 Յ. Մէրեէմ-Գուլի Բ Պ
- 26 Տիգրան Հիւնքեարպէյէյտ. Բ Պ
- 27 Աւետիս Սուրէնեան
- 28 Տօքթ. Այվազեան Բ 2
- 29 Գէորդ Այվազեան Բ Պ
- 30 Յակոբ Եէմէրճեան
- 31 Յակոբ Գուրգէն Բ Պ
- 32 Խաչիկ Կամսարական
- 33 Մինրան Ինճէեան Բ 9
- 34 Մարտիրոս Էքսէրճեան Բ
- 35 Մանուէլ Պէչրեան Բ
- 36
- 37

Բ. Վիճակ
Պէշիկբաշ

- 38 Բարսեղ Հայաճեան Բ 2
- 39 Յովհաննէս Քէրէտէճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան Բ 3
- ԵՒՆԻ-ԳԱՐՈ.
- 41 Լեւոն Բարսամճեան Բ Պ
- 42 Մարուպէ Յրէնկեան Բ 2
- 43 Պօղոս Էնքէրճեան Բ 2
- 44 Յակոբ Պօչնակեան Բ Պ

Իւսկիւտար Ս. Խաչ

- 45 Սիմէոն Ֆէլիկեան Բ Պ
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ 3

47 Գասպար Գասպարեան
48

Իւսկիւտար Ս. Կարապետ

- 49 Մինրան Պահճէգափուլ. Բ
- 50 Պօղոս Թօրթունեան Բ
- 51 Տրդատ Փափազեան Բ 2
- 52 Յակոբ Հաճեան Բ 2
- Գ. Վիճակ
Գասրմ-Բաշա

53 Գասպար Զեբաղ Բ 3

- Բերա
- 54 Գրիգոր Աէլիմյէճեան Բ 2
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէլկեան
- 57 Նշան Պօյաճեան Բ
- 58 Վիշէն Օրմանեան Բ
- 59 Սինքերիմ Մանուկեան Բ
- 60 Համբարձում Մազպուլի.
- 61 Մանուկ Ասլանեան Բ
- 62

Միջազիւղ

- 63 Տիգրան Եւտուֆեան Բ 2
- 64 Մկրտիչ Գազանճեան
- 65 Մկրտիչ Դանթեան Բ 2
- 66 Ստեփան Տամատեան Բ 2
- 67

Պէլզօգ Է. Ղարափա

68 Միքայէլ Մամիկոնեան Բ 3

Գ. Վիճակ
Քուզկուճմազ Է. Իճատի

- 69 Մկրտիչ Մէջպուրեան Բ 3
- 70 Սիմոն Մաքսուտեան Բ 3

Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԵՐ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան	Կարին	121 Ստեփան Փափազեան
72 Կարապետ Նազարեան	101 Սերովուէ Աղնաւորեան	Տիվրիկ
Նարլը-Գաբու	Քեօթանեա	122 Նշան Գարազաշ
73 Միհրան Տէօրմէճեան	102 Աւետիա Թընկրեան	Զէյրուն Է. Մարաշ
Եհնի-Մանալլէ Սամարիոյ	Աղրիանուպօլիս	123
74	103 Յակոբ Պարոնեան	Տրապիզօն
Թօփ-Գափու	Նիկոմիդիա	124
75	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125 Կարապետ Սէթեան
Աստուածածին	105 Յակոբ Գորեան	Տիգրանակէրտ
76	Ղարանիսար	126 Միհրան Չօլանեան
Գուրու-Զէլմէ	106 Կարապետ Երէցեան	Վազ
77 Կարապետ Սրբաճեան	Արաբկիր	127 Մարկոս Աղաբեգեանց
Հիսար Է. Պօյաճի-Գիւղ	107 Կարապետ Խաչիկեան	Աղբամար
78	Բաղէշ	128
Նոր-Գիւղ Է. Սրեհիա	108 Արփիար Արփիարեան	Հալեպ Է. Այնթապ
79	Պրուսա	129
Պայտտ	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
80 Մկրտիչ Կիւմիւշեան	Էւզոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Ռէթեան Թաղէսեան	110 Կարապետ Կիւրճեան	Ռուստուք
82 Ներսէս Երէցեան	Ամասիա	131
Քարակեօմրիւկ	111 Համբարձում Արաճաճեան	Քաբերդ
83 Յովաննէս Թորոսեան	Քալու	132
84 Կարապետ Փանոսեան	112 Յովաննէս Աղնաւորեան	Զմլիածագ
Ե. Վիճակ	Եղեմիա	133
Սամարիա	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
85 Յակոբ Արշակ	Մանճըլըս	134
86 Սարգիս Աղաբեգեան	Համքն	Ատանա
87 Յովաննէս Նուրեան	114	135 Մինաս Չերազ
88 Ռուբէն Կիւթիւզկըտան	115	Սղերդ
89	116 Ռէթէոս Պէրպլեան	136 Մատթէոս Ալէքսանեան
90	Թիքիլտաղ	Եօզրատ
91	117 Տիգրան Գ. Մինանեան	137
92	Կեսարիա	Մայրքիա
93	Խարբերդ	138 Գէորգ Վարդանեան
94	119	Իզմիր
95 Յովաննէս Արշակունի	Պայրքեօեր	139
96 Ռուբէն Պուլկուրեան	120 Ստեփան Գօլօլեան	Էգիպտոս
97 Յակոբ Խանտանեան		140 Արքայաճաճ Մուրադեան
98 Նիկողոս Թիւլպէնաճեան		
99		
100		

ԱՁԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԿՍՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա.	Արեւադէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Մէֆէրեան	Բ.	»
3.	»	Մատթէոս	»	Իղվիրեան		
4.	»	Կարեղին	Վրդ.	Թաթարեան		
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա.	Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ.	»
7.	»	Յակոբ	»	Ա. Փափազեան		
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի		
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան		
10.	»	Սահակ	»	Տ. Մարգարեան		
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան		
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան		
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան		
14.	»	Կարապետ	»	Սէթեան		

ԱՆԿՍՄՔ ԲՍՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Աղնաւորեան	Յովհաննէս	Իֆէնտի		
2.	Այվաղեան	Տօք. Նշան	»	Բ.	Արեւադէր
3.	Գրլըճճրեան	Գէորգ	»		
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա.	Արեւադէր
5.	Խըւորեան	Գրիգոր	»		
6.	Խօրասունճեան	Թովմաս	»		
7.	Հաղարեան	Կարապետ	»		
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ.	Արեւադէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա.	»
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Իֆէնտի		
11.	Պապօեան	Պապի	»		
12.	Սթիմարաճեան	Գէորգ	»		
13.	Փէշտիմալճեան	Տօքթօր Տիգրան	»		
14.	Քիւրքճիխանլեան	Կարապետ	»		

ՉԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒՆԵ ՆԱՐԱՋՕՂՈՎ ԳՆԱԲԵՍ

	Օ Ր Ս Վ Մ Ր Գ Վ Յ			
Ա. — Աստուծոյ զորութեան զօրութիւնք . 2				
1. — Վաւերացումն Է. Կ. Ը. խոսերու Ատենագրութեանց .				
2. — Բացակայութիւնք .				
3. — Ծանօթութիւնն ի Մայր-Գիւանէ յաղագս Մէրեմ-Գուլի էֆէն .				
տի երեսփոխանական խնդրոյ .				
4. — Հարցում Համբարձում էֆէնտի Մայր պուլեանի ի մասին Աղ- գային կաթնածախան խնդրոյ .				
5. — Հարցումն Տ. Թորնին Նար-Պէյ Որբազանի ի մասին Պէկեան Թ. էֆէնտի երեսփոխանական խնդրոյն .				
Բ. — Ընտրութիւն Ելմտական Յանձնախմբի .				
Գ. — Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման .				
Դ. — Ընտրութիւն Պ. Աստուծոյ զօրութեան Սղղային Սղղութիւն .				
Ե. — Առաջարկութիւն Խալսն փղղուի ի մասին Առաջնորդական խնդրոյ եւ տեղեկագիր նախաձեռնութեան Գիւանի .				
Ֆ. — Բացակայք .				